

Նաիրա Մկրտչյան

Մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն սոցիալական
արդարությանը հետհեղափոխական Հայաստանի հանրային-
քաղաքական խոսույթում

(Վերլուծական զեկույց)

Երևան – 2020



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Հետազոտությունն իրականացվել է «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության «Քաղաքականության հետազոտություն» ծրագրի շրջանակում տրվող դրամաշնորհի օգնությամբ:

Վերլուծական զեկույցում տեղ գտած տեսակետներն ու վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության տեսակետների ու դիրքորոշումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	13
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	26
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	46
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	62
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	68

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԽՍՀՄ փլուզումից եւ Հայաստանի անկախացումից ի վեր պետական իշխանության հավակնող եւ իշխանության եկած բոլոր ուժերն անխտիր հռչակել են համակարգային բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության մասին: Անկախ դրանց անկեղծությունից ու հաջողվածությունից՝ դատելով հայտարարությունների բովանդակությունից ու իրականացված քաղաքականություններից՝ դրանք իրենց բնույթով հիմնականում ազատական-ժողովրդավարական էին: Միաժամանակ տարիներ շարունակ հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերն ու ծավալվող գործընթացները հանրության ամենատարբեր խմբերի ու շերտերի շրջանում առաջացնում էին դժգոհություն, անարդարության խորը զգացում եւ ուղեկցվում էին մարդու հիմնարար իրավունքների կոպիտ խախտումներով: Ըստ էության՝ հենց վերջիններս էլ հանգեցրել են ՀՀ-ում 2018 թվականին տեղի ունեցած թավշյա հեղափոխությանը: Եվ այս առումով ՀՀ նոր իշխանություններից ու քաղաքական/քաղաքացիական որոշ դերակատարներից հասարակական սպասումները վերաբերում են խորքային սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարեփոխումներին՝ ուղղված սոցիալական արդարության վերականգնմանը/հաստատմանը: Այս համատեքստում ուշագրավ է հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում ազատական-ժողովրդավարության համար երկու առանցքային քաղաքական արժեքների/գաղափարների՝ սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների հարաբերումը: Որպես տեսական շրջանակ ընտրելով ամերիկացի փիլիսոփա Ջ. Ռոլսի արդարության տեսությունը, ուր արդարությունը համարվում է հասարակական հաստատությունների առաջնային առաքինությունը, իսկ մարդու հիմնարար իրավունքներն ու դրանց պահպանումը՝ սոցիալական արդարության մաս, հետագոտությունը փորձում է բացահայտել հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն ու այդ հարաբերման բնութագիրը:

Խորհրդային Միությունից եկող իներցիայի եւ հետխորհրդային շրջանի սոցիալ-տնտեսական դժվարությունների ազդեցությամբ մարդու հիմնարար իրավունքները հաճախ են «զոհաբերվել» եւ դարձել տարաբնույթ գործարքների առարկա: Դրա հետեւանքով ի հեճուկս նրա, որ բարեփոխումների փորձն իրականացվել է ազատական-ժողովրդավարական մոդելի շրջանակում, մարդու հիմնարար իրավունքները լայնորեն չեն ընկալվում կամ խորապես չեն գիտակցվում որպես սոցիալական արդարության մաս:

Այդ առումով հետազոտությունը ձգտում է բացահայտել իրադրությունը հետհեղափոխական շրջանում: Եզրակացություններն ու առաջարկությունները, որոնք արվում են առանցքային պաշտոնական փաստաթղթերի, հրապարակային ելույթների ու հարցազրույցների խոսույթային վերլուծության ու փաստաթղթերի վերլուծության, թեմային առնչվող իրականացված հետազոտությունների երկրորդային վերլուծության, ինչպես նաեւ անհատական խորին հարցազրույցների արդյունքների հիման վրա, ուղղված են սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների միջեւ խորքային կապի ըմբռնումը բարելավելու, այդ կապի կարելորության գիտակցումը բարձրացնելու՝ արդյունավետ դարձնելով գործադրվող քաղաքականությունները:

Վերլուծական զեկույցը բաղկացած է ներածությունից, որին հաջորդող գլխում պարզաբանվում է հետազոտության տեսական շրջանակը, հիմնական ըմբռնումները եւ նրանց աղերսները հետխորհրդային Հայաստանում ծավալվող բարեփոխումների օրակարգի եւ հանրային պատկերացումների հետ: Երկրորդ գլուխը կենտրոնանում է հրապարակային տեքստերում սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների որպես քաղաքական առանցքային արժեքների/գաղափարների հողավորման (արտիկուլացման) վրա: Վերջին՝ երրորդ գլուխը, տասնհինգ փորձագետների, պաշտոնական եւ քաղաքացիական հասարակության շրջանակներից հանրային-քաղաքական գործիչների հետ ունեցած անհատական խորին հարցազրույցների արդյունքներին համապարփակ անդրադարձն է: Վերլուծությունը եզրափակում են արդյունքների համադրման հիման վրա արվող եզրակացություններն ու առաջարկությունները:

Իրավիճակի նկարագրություն

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում ծավալված քաղաքական գործընթացները ի վերջո հանգեցրին խաղաղ ճանապարհով իշխանափոխության: Հընթացս եւ դրանից հետո իրադարձությունների այդ շարքը հանրային-քաղաքական խոսույթում ստացավ «թավշյա, ոչ բռնի, ժողովրդական հեղափոխություն» անվանումը,¹ որին կարճ ժամանակ անց եկավ միանալու նաեւ երկրորդը՝ «սիրո եւ համերաշխության հեղափոխություն» անվանումը:² Իր առանցքային ելույթներից մեկում շարժման առաջնորդի պնդմամբ «համաժողովրդական այս շարժման ներհայաստանյան կյանքին վերաբերվող ամենակարեւոր եւ ուժեղ ուղերձն Արդարության եւ Ազատության պահանջն է»:³ Դիտված որպէս ազատագրում⁴ նրանում կոչերի հիմնական հասցեատերը ՀՀ հպարտ քաղաքացին էր, քաղաքական փոփոխությունների հիմնական նպատակները՝ կոռուպցիայի ու մենաշնորհների վերացումը, օրենքի գերակայության, օրենքի առջեւ բոլորի հավասարության հաստատումը, մարդու իրավունքների պաշտպանությունը եւ այլն:

Առանցքային նշանակություն ունեցող այնպիսի քաղաքական արժեքների ու գաղափարների տեսանկյունից, ինչպիսիք սոցիալական արդարությունն ու մարդու հիմնարար իրավունքներն են, հռչակված նպատակները ոչ այլ ինչ էին, քան հաստատում առ այն, որ գործող հանրային կանոնները, պրակտիկաները անարդար են եւ տարիներ շարունակ զանգվածաբար ոտնահարել են այդ թվում՝ նաեւ մարդու հիմնարար՝ քաղաքական ու քաղաքացիական, իրավունքները:

¹ Առաջին անվանումը հնչեցրել է այն ժամանակ համաժողովրդական շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանը:

² Ըստ Վահրամ Սողոմոնյանի վկայության՝ անվանման հեղինակը Մոմիկ Վարդանյանն է, որը հանրայնացվել է Ն. Փաշինյանի կողմից հանրահավաքներից մեկի ժամանակ:

³ «ՀՀ վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանի ելույթը Ազգային ժողովում», *Առավոտ*, 1 Մայիսի, 2018, առցանց <https://www.aravot.am/2018/05/01/954167/>, այց՝ 19.01.2020:

⁴ Տե՛ս նույն տեղում:

Այս համատեքստում ակամա որոշարկվում է այս երկու առանցքային արժեքների ու գաղափարների՝ սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների հարաբերման հարցը հանրային-քաղաքական խոսույթում, որն ավելի հաճախ դուրս է մնացել գիտական ուշադրության տիրույթից եւ միշտ չէ, որ ամենայն խորությամբ գիտակցվել ու գիտակցվում է հանրային-քաղաքական խոսույթի ազդեցիկ դերակատարների կողմից:

Առաջարկվող հետազոտական թեման ուսումնասիրված չէ: Ընդ որում, նման՝ հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարության հետ մարդու հիմնարար իրավունքների հարաբերման դիտանկյունից առնվազն Հայաստանում ուսումնասիրություն երբեւէ չի արվել: Հետհեղափոխական շրջանում թեմայի հետ որոշ առնչություններ ունեցող երկու հետազոտություններ են հասանելի՝ *«Ի՞նչ է արդարությունը. արդարության ընկալումները հայաստանցիների շրջանում»* (Անահիտ Սիմոնյան, Հայկ Սմբատյան, Միշա Թադևոսյան, Սոֆյա Մանուկյան («Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ / «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամ, 2018 թ.)) եւ *«Աղքատություն և մարդու իրավունքներ. ինչպե՞ս ձևավորել իրավունքահենք պետական աղքատության հաղթահարման քաղաքականություն Հայաստանում»* (Անահիտ Սիմոնյան, Գոռ Հակոբյան («Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ, 2019 թ.) հետազոտությունները: Հետեւաբար առնվազն հայաստանյան համատեքստում այսպիսի հետազոտությունն ինքնին նորարարություն է:

Հետազոտության թեման կարելուք է նաեւ այն պատճառով, որ մեզանում ընդհանրապես քաղաքական գաղափարների/արժեքների էմպիրիկական ուսումնասիրությունների սակավություն կա: (Պատկերը որոշ չափով պարզ է նախկինում արված հետեւյալ հետազոտություններից՝ Նարինե Խաչատրյան, Սոնա Մանուսյան, Աստղիկ Սերոբյան, Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, *Մշակույթ, Արժեքներ, Համոզմունքներ. Վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում* (Եր.: Հեղ. Հրատ., 2014) եւ Արթուր Մկրտիչյան, Հարություն Վերմիշյան, Սոնա Բալասանյան, *Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում. Հայաստան 2016* (Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայկական մասնաճյուղ, 2016):

Մինչև հեղափոխական շրջանի հայաստանյան հասարակության հիմնական կառուցվածքի արդար/անարդար լինելու վերաբերյալ որոշ պատկերացում է տալիս նաև Կովկասյան Բարոմետրի արդյունքները, որոնք սոցիալ-տնտեսական խնդիրների եւ քաղաքական դիրքորոշումների վերաբերյալ տնային տնտեսությունների ուսումնասիրություն է: Այստեղ սոցիալական արդարության հետ անմիջականորեն առնչություն ունեցող հասարակական երեւոյթներից գործազրկությունը, աղքատությունը, համարվել են Հայաստանի համար ամենալուրջ խնդիրները: Մարդու հիմնարար իրավունքների ոտնահարումը նույնպես տեղ է գտել հայաստանյան մարտահրավերների շարքում, բայց նախորդների չափ կարեւորված չէ:⁵ Հետազոտության բնույթով պայմանավորված՝ չի երեւում մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն սոցիալական արդարությանը հանրային-քաղաքական խոսույթում:

Ուստի ե՛ւ գիտական, ե՛ւ գործնական առումով այդ հարաբերման ուսումնասիրությունը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում բավական հրատապ է: Այն ուղղակիորեն առնչություն ունի նրան, թե հարաբերվում են այդ արժեքները հանրային-քաղաքական խոսույթում, թե ոչ, ինչպես են հարաբերվում, ընդհանրապես ինչ տեղ ունեն դրանում եւ գործադրվող պրակտիկաներում, հանդիսանում են հանրային քաղաքականության ուղենիշներ, թե ոչ:

Հետազոտության նպատակն է բացահայտել հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն ու այդ հարաբերման բնութագիրը: Հանրային քաղաքականության տեսանկյունից հետազոտությունը գործնականորեն միտված է՝ նպաստելու սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների միջեւ եղած խորքային կապի վերաբերյալ ըմբռնումների բարելավմանը, կապի կարեւորության գիտակցման բարձրացմանը ինչպես հանրային-քաղաքական գործիչների, այնպես էլ առավել լայն հանրության շրջանում:

⁵ Most important issue facing the country, Caucasus Barometer 2019 Armenia, անցանց՝ <https://caucasusbarometer.org/en/cb2019am/IMPSSI/>, այց՝ 16.07.2020:

Ակնկալվող արդյունք են իրագործման համար նախատեսվող առաջարկությունները, որոնք կներկայացվեն համապատասխան պետական մարմինների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ակադեմիական շրջանակներին, հանրային-քաղաքական գործիչներին՝ սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների միջեւ խորքային կապի ըմբռնումը բարելավելու եւ այդ կապի կարելություն գիտակցումը բարձրացնելու համար:

Հետազոտությունը բարձրացրել է հետեւյալ հարցերը.

- *Արդյո՞ք հանրային-քաղաքական խոսույթի առանցքային դերակատարները մատնանշում են մարդու հիմնարար իրավունքների եւ սոցիալական արդարության միջեւ կապը, թե՞ ոչ:*
- *Ե՞րբ եւ ո՞ր դեպքերում (հանրային նշանակության որ իրողությունների պարագայում) է հատկապես այդ կապն ի հայտ գալիս հանրային-քաղաքական խոսույթում:*
- *Մարդու հիմնարար իրավունքների հարաբերումը սոցիալական արդարությանը ուղղակի՞ է, թե՞ անուղղակի:*
- *Եթե անուղղակի է, ապա ի՞նչ իրողություններ են միջնորդում այդ կապը եւ ինչպե՞ս են դրանք ընկալվում այդ կապի մեջ:*
- *Հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում մարդու հիմնարար իրավունքներից որո՞նք են ավելի շատ կամ ավելի քիչ ի հայտ գալիս սոցիալական արդարության հետ կապի մեջ:*

Հետազոտության մեթոդաբանություն

«Մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն սոցիալական արդարությանը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում» թեմայի հետազոտության համար տեսական շրջանակ է ծառայում ամերիկացի հայտնի փիլիսոփա Ջ. Ռոլսի սոցիալական արդարության տեսությունը: Ըստ նրա՝ արդարությունը վերաբերում է այն եղանակին, որով առանցքային հասարակական

հաստատությունները բաշխում են հիմնարար իրավունքներն ու պարտականությունները եւ որոշադրում հասարակական համագործակցությունից հետեւող շահավետությունների բաժանումը:⁶ Ձեւակերպված լինելով ազատականության ծիրում՝ այս տեսությունն արդարությունը համարում է հասարակական հաստատությունների առաջնային առաքինությունը, իսկ մարդու հիմնարար իրավունքները (դրանց թվում Ջ.Ռոլսն ընդգրկում է *ընտրական, պաշտոն գրավելու, խոսքի եւ հավաքների, խղճի, մտքի, անձի ազատության, կամայական կալանքի ու բանտարկության չենթարկվելու, մասնավոր սեփականություն ունենալու իրավունքները*⁷) ու դրանց պահպանումը՝ սոցիալական արդարության մաս: Ավելին՝ հասարակական հաստատությունների արդար լինելու տեսանկյունից առաջնային կարեւորություն ունեն հենց հիմնարար՝ քաղաքական ու քաղաքացիական իրավունքների հատկացումն ու իրացումը, որոնց անթույլատրելի է դարձնել քաղաքական սակարկման առարկա կամ «գոհաբերել» հանուն սոցիալ-տնտեսական նկատառումների:

Տեսական այս շրջանակի ընտրությունը նախ եւ առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ ԽՍՀՄ փլուզումից եւ Հայաստանի անկախացումից ի վեր՝ առնվազն հայտարարությունների մակարդակում հռչակված համակարգային բարեփոխումները կրել են ազատական-ժողովրդավարական բնույթ: Իսկ Ռ. Ռոլսի ուսմունքն իր հերթին ազատական-ժողովրդավարական մոդելի շրջանակում է: Եվ ուստի այն՝ որպես տեսանկյուն թույլ է տալիս երեւակել, տեսանելի դարձնել սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերումը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում:

Այս տեսական շրջանակում հետազոտությունն իրականացնելու համար ուղղորդիչ դեր ունի քաղաքական հաղորդակցության ուսումնասիրությունների ասպարեզում բրիտանացի գիտնական Էնդրյու Չեդվիկի *հանրային-քաղաքական խոսույթի մոտեցումը*: Բրիտանացի գիտնականը կոնկրետ պատմական համատեքստում քաղաքական գաղափարների արտիկուլացման առումով առանձնացում է երեք տիպի

⁶ Տե՛ս John Rawls, *A Theory of Justice* (The Belknap Press of Harvard University Press: Cambridge/Massachusetts, 2005), 3–7:

⁷ John Rawls, *A Theory of Justice*, 61:

խոսույթներ՝ փիլիսոփայական, հանրային-քաղաքական եւ սիմվոլիկ: Նրա կարծիքով հանրային-քաղաքական խոսույթին պատկանող տեքստերը կարող են լինել միջտեքստային: Սա նշանակում է, որ դրանք կարող են հղել տարբեր, այդ թվում՝ նաեւ փիլիսոփայական տեքստերի, այլ առիթով հնչած համոզմունքների ու պատկերացումների ներհյուսում լինել: Նրա ըմբռնմամբ «հանրային-քաղաքական խոսույթը կարող է [...] սահմանվել որպես մի գործընթաց, որը կենտրոնացած է քաղաքական կյանքում գաղափարների հաղորդակցման միջին մակարդակի վրա, որի վերլուծությունը ներառում է ո՛չ քաղաքական տեսության «խոշոր գործերը», ո՛չ էլ «զանգվածային» կարծիքի ուսումնասիրությունը, ինչպես այն արտահայտված է հասարակական կարծիքի հարցման մեջ, եւ որը կիզակետում ներառում է քաղաքական գաղափարի ե՛ւ արտադրությունը, ե՛ւ ընդունումը»:⁸ Միաժամանակ պետք է ընդունել, որ հանրային-քաղաքական խոսույթը ներքին առումով այնպես հարակցված (internally coherent) եւ նրբագեղորեն կառուցակարգված (elegantly structured) չի կարող լինել, ինչպես փիլիսոփայական խոսույթը:⁹ Բայց սա չի նշանակում թե դրանց միջեւ առնչություններ չկան, քանի որ հրապարակային տեքստերը, քաղաքական ծրագրերն ու ոլորտային ռազմավարությունները հաճախ դիմում են փիլիսոփայական խոսույթի օգնությանը: Նույն Ջ. Ռուլսը համարում էր, որ քաղաքական փիլիսոփայությունը (այսինքն՝ այդ թվում՝ նաեւ իր տեսությունը) հեռու չէ հասարակությունից, աշխարհից եւ պրակտիկայից:¹⁰

Թեմայի հետազոտությունն իրականացվել է խոսույթի վերլուծության, փաստաթղթերի վերլուծության, տվյալների երկրորդային վերլուծության եւ անհատական խորին հարցազրույցների մեթոդներով: Հետազոտության համար հիմնական նյութ են ծառայել «Կառավարության 2019–2023 թվականների ծրագիրը»,¹¹ «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային

⁸ Andrew Chadwick, “Studying Political Ideas: A public political discourse approach,” *Political Studies*, Vol. 48, Issue 2 (May 2000): 289.

⁹ Տե՛ս նույն տեղում, 294:

¹⁰ Տե՛ս John Rawls, *Political Liberalism* (New York: Columbia University Press, 2005), 45:

¹¹ «Կառավարության 2019–2023 թվականների ծրագիր», առցանց՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf>, այց՝ 19.01.2020:

ռազմավարությունը»,¹² «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020-2025 թվականների ռազմավարության նախագիծը»,¹³ հանրային-քաղաքական խոսույթի վրա առավել ազդեցիկ քաղաքական/հանրային գործիչների տարբեր առիթներով հնչեցրած ելույթներ, ՋԼՄ-ներին տված հարցազրույցներ, որոշ կուսակցությունների նախընտրական ծրագրեր, փորձագիտական կարծիքներ եւ երկու հետազոտություններ՝ «*Ի՞նչ է արդարությունը. արդարության ընկալումները հայաստանցիների շրջանում*» (Անահիտ Միմոնյան, Հայկ Սմբատյան, Միշա Թադևոսյան, Սոֆյա Մանուկյան («Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ / «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամ, 2018 թ.)), «*Աղքատություն և մարդու իրավունքներ. ինչպե՞ս ձևավորել իրավունքահենք պետական աղքատության հաղթահարման քաղաքականություն Հայաստանում*» (Անահիտ Միմոնյան, Գոռ Հակոբյան («Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ, 2019 թ.): Հատկապես հրապարակային ելույթների ու ՋԼՄ-ներին տված հարցազրույցների պարագայում հաշվի է առնվել տեքստի ու համատեքստի միջև սերտ կապը, սոցիալական, մշակութային, քաղաքական իրադրության հետ գործորդների կողմից արտաբերված տեքստի առնչվածությունը:

¹² «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարություն», առցանց՝ <http://e-rights.am/>, այց՝ 19.01.2020:

¹³ «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 թվականների ռազմավարության նախագիծ», առցանց՝ <https://www.e-draft.am/projects/1928/about>, այց՝ 25.01.2020: Այս ռազմավարության նախագիծը 2020 թվականի երկրորդ կեսին հիմնավորապես վերափոխվել է եւ ներկայացվել հանրային քննարկման:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ
ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ԽՍՀՄ փլուզումից եւ Երրորդ հանրապետության հիմնադրումից ի վեր Հայաստանում պետական իշխանության հավակնող եւ իշխանության եկած բոլոր ուժերն անխտիր հռչակել են համակարգային բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության մասին: Վերջինս առերեւոյթ նշանակել ու այսօր էլ շարունակում է նշանակել.

- *Ամենատարբեր (տնտեսության, քաղաքականության, սոցիալական պաշտպանության, արդարադատության, կրթության ու առողջապահության եւ այլն) ոլորտներում փաստացի հասարակական կյանքը կազմակերպող եւ գործող սկզբունքները, կառուցակարգերը, դրանց սահմաններում ի հայտ եկող պրակտիկաները, ըստ էության, անընդունելի են եւ ոչ կենսունակ:¹⁴*

Բացի վերոհիշյալից՝ այդ հայտարարությունները որպէս կանոն այն մասին էին, որ Հայաստանին անհրաժեշտ են այնպիսի համակարգային բարեփոխումներ, որոնք բնութիւնով ազատական ու ժողովրդավարական են:¹⁵ Ընդ որում՝ վերջինս անկախ է նրանից՝ անկէ՞ղծ են եղել հայտարարությունները, բավարար է եղել քաղաքական կամքը՝

¹⁴ Այս համատեքստում «ոչ կենսունակ» ասելով՝ պիտի հասկանալ որպէս հայաստանյան հանրոյթի ապագան հարցականի տակ դնող:

¹⁵Տե՛ս «Հայոց համազգային շարժում» կուսակցության ծրագիր, 2007», առցանց՝ http://www.anm.am/index.php?option=com_content&view=article&id=81&Itemid=67, այց՝ 03.02.2020, «Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագիր, 2013», առցանց՝ http://www.anc.am/?page_id=1024, այց՝ 03.02.2020, «ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիր, 2013», առցանց՝ [http://www.hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20\(1\).pdf](http://www.hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20(1).pdf), այց՝ 03.02.2020, «Հայաստանի Հանրապետական կուսակցության ծրագիր», առցանց՝ <http://hhk.am/hy/program/>, այց՝ 03.02.2020: Սկզբնական ժամանակաշրջանի մասին տե՛ս Astghik Mirzakhanyan, Economic and Social Development, in: *The Armenians: Past and Present in the Making of National Identity*, edited by Edmund Herzig and Marina Kurkchian (London: Routledge, 2005), 198-210: Արժեքավոր է նաեւ դիտարկել Armine Ishkhanian, *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia* (London: Routledge, 2008).

փոփոխությունների հասնելու համար, իսկ որդեգրված քաղաքականություններն ու գործողություններն արդյունավետ էին, թե՞ ոչ եւ այլն:

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ առնվազն վերջին երեք տասնամյակների ընթացքում (մի կողմ թողնելով ԽՍՀՄ վերջին տարիների գորբաչովյան վերակառուցման փորձերը) **խորքային փոփոխություններ իրականացնելու օրակարգը** եղել է մնում է հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթի կենտրոնական թեմաներից մեկը. բոլոր այն քաղաքական դերակատարները, որոնք ձգտել են իրենց ձայնը լսելի կամ ազդեցիկ դարձնել հանրային-քաղաքական խոսույթում, փորձել են հանդես գալ նախ եւ առաջ նման օրակարգով:¹⁶

Ինչ վերաբերում է այն իրականացնելու գաղափարաբանական շրջանակին, ապա, դատելով նախընտրական փուլերում հնչած հայտարարություններից ու առաջադրված ծրագրերից, այն մի զգալի մասով, եթե ոչ հիմնականում, **ազատական-ժողովրդավարական** է: Գործնականում վերջին երեսուն տարիներից պակաս ժամանակահատվածում ձեռնարկվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտները շոշափող ազատական ու ժողովրդավարական բնույթի օրենսդրական, կառուցվածքային, գործառույթային փոփոխություններ, որոնց, սակայն, միշտ չէ, որ համապատասխանել են առկա հասարակական պրակտիկաները: Այդ ընթացքում ծավալված հողի ու գույքի մասնավորեցումը, քաղաքաշինական իրականացված որոշ նախագծեր, ընտրական գործընթացների գերակշռող մեծամասնությունը, ընդերքի շահագործումը եւ այլն պարբերաբար առաջացրել են հասարակական տարբեր խմբերի ու շերտերի դժգոհությունը: Այս համատեքստում հանրային-քաղաքական խոսույթին մասնակից ազդեցիկ կամ ազդեցիկության ձգտող դերակատարները պարբերաբար առերեսել են առնվազն մեկ առանցքային խնդրի.

¹⁶ Մշակութաբան Հրաչ Բայադյանը, դիտարկելով խորհրդահայ արդիականության պատումները եւ այդ համատեքստում վերլուծելով մի շարք խոհրդահայ եւ հետխոհրդահայ իրողություններ, գալիս է այն եզրակացության, որ հետխոհրդային Հայաստանը ապրել է ոչ միայն ապաարդյունաբերացում, այլեւ ապաարդիականացում, տե՛ս այս մասին Հրաչ Բայադյան, *Երևակայելով անցյալը. խորհրդահայ արդիականության պատումներ* (Երևան: Հեղինակային հրատ., 2020), 186:

- *Խորքային փոփոխությունների օրակարգի տեսանկյունից ձեռակերպել առկա, հասարակական նշանակության խնդիրները:*

Խնդիրների սպեկտրը, բուն ձեռակերպումը, հետևաբար խնդիրների մասին խոսելու կերպն անխուսափելիորեն պայմանավորված են եղել եւ միշտ էլ պայմանավորված կլինեն նրանով, թե.

- *ինչ արժեքներ են շրջանառվել ու հաղորդակցվել այդ տիրույթում,*
- *ինչպես են խոսել այդ արժեքների մասին, ինչպիսի «լեզվով»՝ հասկացություններով, բառերով, ոճով,*
- *ովքեր են խոսել, երբ եւ որտեղ,*
- *իրականում ում հետ են խոսել եւ ինչի համար:*

Ահա այս համատեքստում քաղաքական այնպիսի արժեքներ ու գաղափարներ, ինչպիսիք **սոցիալական արդարությունն** ու **մարդու հիմնարար իրավունքներն** են, հատկապես վերջինիս հարաբերումն առաջինին, առանձնահատուկ կարեւորություն են ստանում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ արժեքներն ընդունված է համարել առանցքային քաղաքական արժեքներ, եւ դրանք որոշակիորեն տեղ ունեն հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում: Ավելին՝ դրանք այն գաղափարներն ու արժեքներն են, որոնց օգնությամբ հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում ձեռակերպում են ստացել հասարակական նշանակության խնդիրներ: Սակայն եթե ուզում ենք, ըստ էության, հասկանալ հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում այս արժեքների, դրանց հարաբերման բնութագիրը, ապա առանձնահատուկ ներհայաստանյան իրողությունները հաշվի առնելուց բացի՝ պիտի նկատի ունենանք նախ որոշ այլ հանգամանքներ: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է համամարդկային-համաշխարհային համատեքստում այս երկու գաղափարների, արժեքների շրջանառման հանգամանքին:

Մարդու (հիմնարար) իրավունքների եւ սոցիալական արդարության գաղափարները, դրանց տիրույթում քննարկվող խնդիրներն ու հարցերը բնականաբար նոր չեն: Սակայն առաջինը՝ մարդու (հիմնարար) իրավունքների գաղափարը,

գործնականում դրա իրացումն ու իրացման ապահովման անհրաժեշտությունը լայնորեն շրջանառվել է ներպետական, միջազգային ու համաշխարհային հարթություններում քաղաքական գերակայություն են դարձել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:¹⁷ Սա նշանակում է, որ միայն 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ համաշխարհայնացման արագընթաց շարժման մեջ ամենատարբեր դերակատարներ՝ պետություններ, կառավարություններ, տեղական ու միջազգային կազմակերպություններ, ցանցեր միմյանց հետ հարաբերվելու համար որպես շրջանակ ձևակերպել են մարդու իրավունքները: Հետեւաբար մարդու (հիմնարար) իրավունքների լեզուն այն հիմնական լեզուն է, որով այսօր «խոսում են» ողջ աշխարհում ներհասարակական, միջազգային խնդիրները քննարկելիս: Սա ամենեւին չի նշանակում, որ գործնականում մարդու (հիմնարար) իրավունքների (որոշ դեպքերում նաեւ՝ զանգվածային) ոտնահարումներ չկան: Ավելին՝ ամենատարբեր փաստարկներով քիչ չեն նաեւ մարդու (հիմնարար) իրավունքների, դրանց ապահովման ու իրացման հնարավորությունների նկատմամբ սկեպտիկական մոտեցումները¹⁸ ընդհուպ մինչեւ այդ լեզվի՝ որպես ինչ-որ առումով պարտադրված լեզվի վերաբերյալ հնչող քննադատությունը:¹⁹

Չնայած այն հանգամանքին, որ մարդու իրավունքների գաղափարը նոր չէ, այնուամենայնիվ, առ այսօր շարունակվում են դրա շուրջ դոկտրինալ բանավեճերը: Եթե կարճառոտ ու կոպտացված ուրվագծել հիմնականը, ապա խոսք կարող է գնալ երկու՝ բնապաշտական (naturalistic) եւ համաձայնական (agreement) մոտեցումների միջեւ բանավեճի մասին: Այսպես բնապաշտական մոտեցմանը հարող ուսմունքներում մարդու իրավունքներն այն իրավունքներն են, որոնք ունեն բոլոր ժամանակներում ու

¹⁷ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն» ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականին, առցանց՝ <https://www.un.am/up/library/UDHR-booklet-Armenian-version.pdf>, այց՝ 19.01.2020, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան» ընդունվել է 1950 թվականին, առցանց՝ https://www.gov.am/u_files/file/kron/2%20EuoroConvent-Arm.pdf, այց՝ 19.01.2020, «Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն» ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ին, առցանց՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500>, այց՝ 18.01.2020: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Charles Beitz, *The Idea of Human Rights* (Oxford: Oxford University Press, 2009).

¹⁸ Տե՛ս նույն տեղում, 3–6:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, 201–202:

բոլոր վայրերում ապրող բոլոր մարդիկ իրենց մարդկային բնության շնորհիվ:²⁰ Համաձայնական մոտեցումը հակված է՝ պնդելու, որ մարդու իրավունքները չափօրինակներ են, որոնց շուրջ համաձայնում են տարբեր բարոյական ու քաղաքական արժեքներ կրող մարդիկ կամ այլ կերպ ասած՝ դրանք միջմշակութային համաձայնության արդյունք են:²¹

Ինչ վերաբերում է սոցիալական արդարությանը, ապա, ինչպես հետազոտողներն են նշում, այն «մոդայիկ բառ» է դարձել 20-րդ դարի 70-ական թվականներին,²² սակայն սկզբի համար ոչ այնքան համաշխարհային հարթության, որքան ներհասարակական խնդիրների արծարծման համատեքստում: Վերջինիս հետեւանքով այդ շրջանից սկսած՝ ասպարեզ են իջել սոցիալական արդարության վերաբերյալ տեսությունների մի ողջ փունջ: Դրանք արագորեն ներառել են հետեւողականորեն «մոդայիկ» դարձող նորանոր բառեր՝ «քաղաքացիություն», «համայնք» եւ այլն: Այդ տեսությունները հետաքրքրական կերպով արձագանքում են հրնթացս ծավալվող իրադարձություններին ու գործնական խնդիրներին եւ ի ցույց դնում գաղափարական ինքնատիպ զուգորդումներ ու մեկնաբանություններ, ծնունդ առնում եւ հղկվում բանավեճերի մեջ:²³ Սոցիալական արդարության շուրջ իրենց մտորումների ու բանավեճերի շրջանակում դրանք փորձում են պարզել, թե *ա) ինչպես են փոխհարաբերվում անձն ու հասարակությունը, բ) ինքնին իրավունքի իրացումը նպատակ է (Ջ. Ռոլս), թե՛ միջոց՝ հասնելու բարիքին (Մ. Սենդել),²⁴ գ) թույլատրելի է գոհաբերել քչերի սզատությունը հանուն մեծամասնության բարօրության (ուտիլիտարիզմ), թե ոչ (Ջ. Ռոլս), դ) պետության իրավասությունը բացառապես մարդկանց բոնությունից, գողությունից ու խաբեությունից պաշտպանելն է (Ռ. Նոզիք),²⁵ թե՛ առնվազն սոցիալ-տնտեսական նվազագույն երաշխիքների տրամադրումը (Ջ. Ռոլս, Ռ. Դվորկին,²⁶ սոցիալիզմ/մարքսիզմ), ե) բովանդակային*

²⁰ Տե՛ս Charles Beitz, *The Idea of Human Rights*, 49:

²¹ Տե՛ս նույն տեղում, 73-73:

²² Տե՛ս Will Kymlicka, *Contemporary Political Philosophy: An Introduction* (Oxford: Oxford University Press, 2002), ix.

²³ Այս մասին համապարփակ ներկայացված է Ուիլ Կիմլիկայի գրքում, Will Kymlicka, *Contemporary Political Philosophy: An Introduction*:

²⁴ Տե՛ս Michael, Sandel *Liberalism and the Limits of Justice* (Cambridge: Cambridge University Press, 1998):

²⁵ Տե՛ս Robert, Nozick *Anarchy, State and Utopia* (Oxford: Blackwell, 1999):

²⁶ Տե՛ս Ronald Dworkin, *Sovereign Virtue: The Theory and Practice of Equality* (Cambridge (Mass): Harvard University Press, 2002):

առումով սոցիալական արդարության սկզբունքները վերապատմական են (Ջ. Ռոլս), թե ազուցված են տեղային համատեքստին ու արժեքներին (Մ. Վալցեր):²⁷

Այս եւ այլ հարցեր կազմավորել են այն շրջագիծը, որում ոչ միայն սոցիալական արդարության, այլեւ մարդու իրավունքների եւ հատկապես մարդու հիմնարար իրավունքների գաղափարները բնականորեն հայտնվել են սերտ փոխառչնության տիրույթում եւ ձեւավորել նորմատիվ շրջանակ արդեն իսկ 20-րդ դարի 70-ական թվականներից: Եվ ուրեմն՝ որպես նորմատիվ շրջանակ կազմավորող գաղափարներ, արժեքներ՝ սոցիալական արդարությունն ու մարդու հիմնարար իրավունքները կարող են ծառայել որպես *գործող հասարակական կառուցակարգերի, սկզբունքների, պրակտիկաների սոցիալ-քաղաքական քննադատության եւ փոփոխության հենք*: Հետեւաբար որպես այդպիսին՝ դրանք կարող են ենթադրել եւ ներկայանալ որպես *արդիականացման ներուժ պարունակող արժեքներ*: Եվ այդ առումով սա նաեւ թույլ է տալիս հանրային-քաղաքական խոսույթի դերակատարներին հասարակական ինչ-ինչ իրողություններ որակել անարդար, մարդու հիմնարար իրավունքների ոտնահարման դրսևորումներ: (Որոշ դեպքերում փոխարենը կարող են առաջարկվել շտկման ուղղությունն ու եղանակները) Կամ հակառակը՝ հայտարարել, օրինակ, որ դրանք արդար են, երաշխավորում են մարդու հիմնարար իրավունքների իրացումը:

Ինչպես մինչ այժմ իրականացված հետազոտություններն են ցույց տալիս, երկուսն էլ՝ (սոցիալական) արդարությունը եւ մարդու հիմնարար իրավունքները՝ անկախ իրենց մեկնաբանություններից, որպես արժեքներ ներկայացված են եւ ավել կամ պակաս չափով հաղորդակցված հայաստանյան հանրության տարբեր շրջանակներում (չափահասներ/երեխաներ, կանայք/տղամարդիկ, պետական ծառայողներ/քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ):²⁸ Ընդ որում՝

²⁷ Sté u Michael, Walzer *Spheres of Justice: A Defense of Pluralism and Equality* New York: Basic Books, 1983):

²⁸ Անահիտ Սիմոնյան, Հայկ Սմբատյան, Միշա Թադևոսյան, Սոֆյա Մանուկյան, «*Ի՞նչ է արդարությունը. արդարության ընկալումները հայաստանցիների շրջանում*»; Անահիտ Սիմոնյան, Գոռ Հակոբյան, «*Աղքատություն և մարդու իրավունքներ. ինչպե՞ս ձևավորել իրավունքահենք պետական աղքատության հաղթահարման քաղաքանություն Հայաստանում*»; Արթուր Մկրտիչյան, Հարություն Վերմիշյան, Սոնա Բալասանյան, *Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում. Հայաստան 2016* (Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայկական մասնաճյուղ, 2016); Նարինե Խաչատրյան, Սոնա

սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների, դրանց հարաբերման թեմաները մեզանում էականորեն առնչվում են հենց խորքային փոփոխությունների օրակարգի հետ: Վերջինում համոզվելու համար բավական է անդրադառնալ 2018 թվականի դեկտեմբերի խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից առնվազն երեքի ներկայացրած նախընտրական ծրագրերին, ուր խնդրո առարկա քաղաքական արժեքները առանցքային դերակատարություն ունեն:²⁹

Մյուս կողմից՝ Հայաստանում եւ ենթադրաբար հետխորհրդային տարածության մի շարք երկրներում խորհրդային անցյալի ազդեցությամբ հանրային պատկերացումներում *մարդու հիմնարար՝ ընտրության, պաշտոն գրավելու, կյանքի, մտքի, խղճի, կրոնի ազատության, արտահայտվելու, հավաքների եւ միավորման ազատության, ազատության եւ անձնական անձեռնմխելիության, ազատ տեղաշարժման, արդար դատաքննության, օրենքի առջեւ հավասարության իրավունքների, խոշտանգումների ու խտրականության արգելքների*³⁰ իրացումն ու պաշտպանությունը հիմնականում չեն ընկալվել որպես սոցիալական արդարության վկայություն: Խորհրդային Միությունից շարունակվող իներցիայով անբացահայտ կերպով (սոցիալական) արդարությունը նույնացվում է նյութական բարիքների ու որոշակի՝ հիմնականում կրթական ու առողջապահական ծառայությունների բաշխման (կամ ուղղակի տրամադրման) հետ: Դրանում էական դերակատար է համարվում պետությունը, իսկ ազդեցիկ՝ վարվող պետական քաղաքականությունները: Այդպիսով սոցիալական արդարության հետ հարաբերման մեջ կարծես ստվերում են մնում մարդու հիմնարար իրավունքները:

Մանուսյան, Աստղիկ Սերոբյան, Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, *Մշակույթ, Արժեքներ, Համոզմունքներ. Վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում*, (Եր.: Հեղ. Հրատ., 2014):

²⁹ ««Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր», *Հետք*, առցանց՝ <https://hetq.am/static/content/pdf/My%20step.pdf>, 22.01.2020, «ԲՈ նախընտրական ծրագիր», առցանց՝ <http://www.sdp.am/%D6%84%D5%B8-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/>, այց՝ 22.01.2020, «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագիր, առցանց՝ <https://www.brightarmenia.am/am/54/1543/lusavor-hayastan-kusakcutyan-azh-nakhyntrakan-tsragir.htm>, այց՝ 22.01.2020:

³⁰ Մարդու հիմնարար իրավունքների այս թվարկումը առավելապես հետեւում է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի» եւ «Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» բովանդակությանը:

Ինչպես հետխորհրդային որոշ երկրների, այդ թվում՝ նաև մինչհեղափոխական հայաստանյան պրակտիկան է ցույց տալիս, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում այդ իրավունքները կարող են «գոհաբերվել» կամ դառնալ «գործարքի» առարկա (օրինակ՝ թե՛ հանրապետական, թե՛ տեղական նշանակության ընտրությունների ժամանակ ընտրակաշառքի ձեռով եւ այլն): Դա այն դեպքում, երբ «դրանք մեզ թույլ են տալիս առավել չափով վերահսկել մեր կյանքին վերաբերող գլխավոր ծրագրերը եւ այդպիսով մեզ պարզեւում են առավել չափով ինքնորոշում»:³¹ Իսկ այդ իրավունքների ոտնահարումն իր հերթին կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական ծանր կացության:³² Եվ ուրեմն՝ ուշագրավ է պարզել անկախությունից ի վեր ազատական-ժողովրդավարական բարեփոխումների օրակարգի հռչակում բերող հանրային-քաղաքական խոսույթում *մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն սոցիալական արդարությանը*:

Այս պարագայում որպես տեսական շրջանակ ծառայող 20-րդ դարի ամերիկացի փիլիսոփա Ջոն Ռոլսի արդարության տեսությունը, որը մարդու հիմնարար իրավունքները կառուցվածքային կապով դարձնում է սոցիալական արդարության էական բաղադրիչը եւ իր հերթին ազատական-ժողովրդավարական մոդելի ջատագով է,³³ մանրամասնման կարիք ունի:

Ամերիկացի փիլիսոփան շեշտադրում է, որ արդարությունը հասարակական հաստատությունների առաջնային առաքինությունն է, իսկ նրա գլխավոր առարկան՝ հասարակության հիմնական կառուցվածքը: Ավելի ճշգրիտ կերպով արդարության առարկան այն եղանակն է, որով առանցքային հասարակական հաստատությունները բաշխում են հիմնարար իրավունքներն ու պարտականությունները եւ որոշադրում

³¹ Will Kymlicka, *Contemporary Political Philosophy: An Introduction*, 144:

³² Մարդու իրավունքների իրացման արգելքների եւ աղքատության միջեւ երկկողմանի կապի մասին տե՛ս Անահիտ Սիմոնյան, Գոռ Հակոբյան, «Աղքատություն և մարդու իրավունքներ. ինչպե՞ս ձևավորել իրավունքահենք պետական աղքատության հաղթահարման քաղաքականություն չայաստանում»: Խնդրին վերաբերող ուշագրավ հոդված է՝ Ադասի Թադեոսյան, Անհավասարության դիսկուրսը եւ աղքատության հաղթահարման հիմնախնդիրը Հայաստանում, *ՀԱՅԱՍՏԱՆ 2018. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* (Եր.: Հումանիտար հետազոտություններ հայկական կենտրոն, 2019), 154–163:

³³ Այս մասին մանրամասն ու նաև քննադատական անկյան տակ տե՛ս Chantal Mouffe, *The Democratic Paradox* (Verso: New York/ London, 2000):

սոցիալական համագործակցությունից հետևող շահավետությունների բաժանումը:³⁴ Կարելու է ամրագրել, որ այս մոտեցմամբ վերջինս նշանակում է, որ իրավունքների ու պարտականությունների բաշխման հարցում կամայականությունները, հասարակական համագործակցությունից ծնունդ առնող օգուտների ու բեռների ոչ հավասարաչափ բաշխումը անարդար է: Այլ կերպ ասած՝ հանրային կանոններով պայմանավորված արտոնյալների ու ոչ արտոնյալների կամ խտրականության գոյությունը, վկայում է հասարակական հաստատությունների կամ գործող հանրային կանոնների անարդարության մասին: Եվ ուստի նախ եւ առաջ այդպես Ջ. Ռոլսը մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը դարձնում է արդար հասարակության բնութագիրը եւ երբ ձեւակերպում է սոցիալական արդարության իր սկզբունքները, ապա առաջնային նշանակություն է տալիս մի սկզբունքի, ըստ որի՝

- *Յուրաքանչյուր անձ պիտի ունենա առավելագույն ընդգրկման հավասար հիմնարար ազատությունների համակարգի հավասար իրավունք համատեղելի բոլորի համար ազատության համանման համակարգի հետ:*³⁵

Մարդու հիմնարար իրավունքների առաջնայնությունն էլ ավելի է ընդգծվում, երբ նա պնդում է, որ «[...] կարելու է, թե որքանով են արդյունավետ եւ ճարտարակերտ օրենքներն ու հաստատությունները, դրանք պետք է բարեփոխվեն կամ վերացվեն, եթե անարդար են: [...] Արդար հասարակության մեջ հավասար քաղաքացիության ազատությունները համարվում են պայմանադրված (settled). արդարությամբ երաշխավորված իրավունքները քաղաքական սակարկման կամ հասարակական շահերի հաշվարկման ենթակա չեն»:³⁶

Սա նշանակում է, որ մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, իսկ դրանք, ըստ Ջ. Ռոլսի հետեւյալն են՝ *ընտրական, պաշտոն գրավելու, խոսքի եւ հավաքների, խղճի, մտքի, անձի ազատության, կամայական կալանքի ու բանտարկության չենթարկվելու, մասնավոր սեփականություն ունենալու*

³⁴ Տե՛ս John Rawls, *A Theory of Justice* (The Belknap Press of Harvard University Press: Cambridge/Massachusetts, 2005), 3–7:

³⁵ Նույն տեղում, 302:

³⁶ Նույն տեղում, 3–4:

իրավունքները,³⁷ չեն կարող գոհաբերվել հանուն որեւէ մեկի կամ խմբային շահերի, ոչ էլ իրավունքի ունեցողի հետ «գործարքի» առարկա դառնալ:

Կարելու է հասկանալ նաեւ, որ այս դեպքում «սոցիալական արդարություն» եզրը նույնական չէ նեղ իմաստով նյութա-տնտեսական, սոցիալական ապահովության կամ դրամական համարժեքով որոշակի եկամուտի ընդունելի չափի հասկացման հետ: Վերջինս կոպտացված իմաստով ռոլյան սոցիալական արդարության ըմբռնման մյուս կողմն է, որն արտացոլված է սոցիալական արդարության նրա երկրորդ սկզբունքում.

*– Սոցիալական և տնտեսական անհավասարությունները պիտի կազմակերպված լինեն այնպես, որ լինեն ե՛ւ պակաս հաջողակների առավելագույն օգտին՝ համատեղելի արդար խնայողությունների սկզբունքի հետ, ե՛ւ կցված՝ բոլորի համար բաց դիրքերին ու պաշտոններին հնարավորության անաչառ հավասարության պայմաններում:*³⁸

Սոցիալական արդարության այս երկու սկզբունքները մյուս ձեւակերպումների հետ միասին ցույց են տալիս, որ «սոցիալական արդարություն» հասկացությունը այս ուսմունքի դեպքում վերաբերվում է (ան)արդար հասարակությանը որպես այդպիսին իր ինստիտուցիոնալ կազմակերպման ամբողջության մեջ: Հետեւաբար այն գործող հիմնական հաստատությունները բնութագրող համապարփակ հասկացություն է որոշակի շեշտադրումներով, եւ առնվազն որոշ դեպքերում ուղղակի նույնական է առնվազն հայաստանյան հանրային տիրույթում կիրառվող «արդարություն» բառի հետ:

Բայց այս տեսական պարզաբանումներն առավել հստակեցնելու համար՝ անհրաժեշտ է մի փոքր էլ ծանրանալ «մարդու (հիմնարար) իրավունք» հղացքի վրա, որի շուրջ ծավալված փիլիսոփայական ու դոկտրինալ բանավեճերին կարճառոտ անդրադարձ եղավ: Այս պահին առավել կարելու է բացահայտել, թե այն իր հերթին ինչ գաղափարների ու արժեքների է լծորդված: Վերջինս կօգնի՝ շոշափելու հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում խնդրո

³⁷ John Rawls, *A Theory of Justice*, 61:

³⁸ Նույն տեղում, 302:

առարկայի բնութագիրը: Այս առումով «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» թե՛ իր Նախաբանում, թե՛ առաջին հոդվածում ուրվագծում է դրանք, երբ պնդում է.

«[...] Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է»:³⁹

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»:⁴⁰

Եթե ընդհանրական դիտարկել, ապա մի կողմից առանց մարդու իրավունքների պաշտպանության՝ անհնար է իրականություն դարձնել արժանապատվության, ազատության, հավասարության, արդարության ու խաղաղության գաղափարները: Մյուս կողմից՝ շեշտադրվում է յուրաքանչյուր մարդու՝ նույնաչափ ուշադրության, հոգածության ու հարգանքի արժանի լինելու հանգամանքը եւ, ինչպես Ի. Կանտը կասեր, նրա «ինքնին նպատակ» եւ «ոչ թե միջոց» լինելը:⁴¹ Ընդհանրապես մարդու իրավունքի գաղափարն ուղիղ աղերս ունի յուրաքանչյուր մարդու անհատականության, եզակիության, գործորդ (agent) լինելու եւ հասարակական հարաբերություններում ազդեցություն քանեցնելու կարողության շեշտադրման հետ:

Միաժամանակ վերոնշյալ այս արժեքներից առնվազն մի մասի, եթե ոչ դրանց բոլորի ամփոփ արտացոլումը կարելի է գտնել նաեւ ՀՀ գործող Սահմանադրության երրորդ՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» հոդվածի առաջին կետում.

³⁹ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 6:

⁴⁰ Նույն տեղում, 8:

⁴¹ St ' u Иммануил Кант, Основы метафизики нравственности, *Сочинения в 6-ти томах*, т.4, ч. 1 (Москва: Мысль, 1965), 269:

«Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անբաժանելի հիմքն է»:⁴²

Սա արդեն վկայում է, որ երկրի բարձրագույն օրենքի մակարդակում որոշակիորեն ամրագրված են դիտարկվող արժեքները:

Վերոնշյալը հաշվի առնելով եւ վերադառնալով ռուսյան հայեցակարգին՝ պիտի փաստել նաեւ, որ հետհեղափոխական շրջանի Հայաստանում իրականացված ու արդեն վկայակոչված հետազոտություններից մեկը ցույց է տալիս, որ, իհարկե, մեզանում (սոցիալական) արդարության մասին մեկ ընդհանրական պատկերացում գոյություն չունի: Դրանք մի քանիսն են, սակայն միաժամանակ ակնհայտ է, որ հիմնականում հյուսվում են գաղափարական երկու առանցքի շուրջ.

- **Իրավունքի/օրենքի** հետ ասոցացվող՝ իրավունք, իրավահավասարություն, օրենքների պահպանում, մարդու իրավունքների պաշտպանություն, խոսքի իրավունք, խոսքի ազատություն, օրենքի գերակայություն, արդար վճիռ՝ ճիշտ և ուղղորդող, արդարադատություն, իրավունքների և պարտականությունների իմացություն:
- **Հավասարության հղացքի** հետ ասոցացվող՝ հավասարություն, հավասար հնարավորություններ, մրցակցային հավասար պայմաններ, հավասար նվազագույն՝ մինիմալ կենսապայմաններ, խտրականության բացակայություն, ուժի հավասարություն:⁴³

Երկուսն էլ Ջ. Ռոլսի սոցիալական արդարության երկու սկզբունքների բովանդակությանն ուղղակի լծորդված են, ինչը ցույց է տալիս, որ ազատական-ժողովրդավարական ծիրում ձեւակերպված սոցիալական արդարության այս հայեցակարգը հայաստանյան հանրային պատկերացումներում առկա է: Սակայն երբ

⁴² ՀՀ Մահմանադրություն, առցանց՝ <https://www.president.am/hy/constitution-2015/>, այց՝ 23.02.2020:

⁴³ Տե՛ս Անահիտ Միմոնյան, Հայկ Մմբատյան, Միշա Թադևոսյան, Սոֆյա Մանուկյան, «Ի՞նչ է արդարությունը. արդարության ընկալումները հայաստանցիների շրջանում»:

դիտարկում ենք Բաղադրիչների տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ այն մասնատված է, բեկված կամ ցրված է հանրային պատկերացումների ողջ սպեկտրով:

Եվ այսպես կարելի է եզրակացնել.

- ԽՍՀՄ փլուզումից եւ Երրորդ Հանրապետության հիմնադրումից ի վեր Հայաստանում հայտարարված խորքային փոփոխությունների օրակարգի գաղափարաբանական շրջանակը, ըստ էության, ազատական-ժողովրդավարական է:
- Ջ.Ռուլսի ուսմունքի անկյան տակ՝ ինքնին ազատական-ժողովրդավարական շրջանակում մարդու հիմնարար իրավունքները հարաբերվում են սոցիալական արդարությանն ուղղակիորեն կամ կառուցվածքային կապի ձեռով՝ որպես նրա մաս, այսինքն՝ մարդու հիմնարար իրավունքների իրացումը մասնակիորեն արդեն իսկ վկայություն է, որ գործող հանրային կանոնները կամ հասարակական հաստատությունները արդար են:
- Խարխաված լինելով յուրաքանչյուր մարդու արժանապատվության, նրա եզակիության եւ ազդեցիկ գործորդ լինելու գաղափարների վրա՝ այն իր արտացոլումն է գտել արդեն իսկ գործող ՀՀ Սահմանադրությունում (հետագայում կտեսնենք նաեւ այլ առանցքային փաստաթղթերում):
- Միաժամանակ սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների միջեւ նման ուղղակի, կառուցվածքային կապն ու հարաբերությունը հանրային պատկերացումներում ներկայանում է մասնատված ու ցրված, այսինքն՝ ազատական-ժողովրդավարական գաղափարաբանական շրջանակը նախնական եզրահանգմամբ՝ որոշակիորեն բեկված է:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀՈԴԱՎՈՐՈՒՄԸ (ԱՐՏԻԿՈՒԼԱՑՈՒՄԸ) ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Սույն հետազոտությունն ընդգրկում է 2018 թվականի ապրիլ-մայիսին տեղի ունեցած իրադարձություններից հետո ընկած մոտ երկու տարիներից մի փոքր պակաս ժամանակաշրջանը: Եվ այս առումով այն սահմանափակված է այն տեքստերով, որոնք հրապարակվել ու շրջանառվել են այդ ընթացքում: Իհարկե, մասամբ սահմանափակիչ դեր ունի նաև այն, թե ինչ էլ հատկապես ում տեքստերն են ընտրվել: Մակայն հաշվի առնելով դրանց ի հայտ գալու նպատակը, երբ էլ որտեղ են դրանք հրապարակվել, ապա պետք է, որ դրանց նշանակությունն իսկապես առանցքային լինի՝ ըմբռնելու մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն սոցիալական արդարությանը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում:

Երբ թագավարակի (coronavirus) եւ պանդեմիայի հետեւանքով 2020 թվականի մարտի 16-ից մինչեւ մայիսի 14-ը ՀՀ-ում հայտարարվեց արտակարգ դրություն (հետո երկարաձգվեց եւս երեք ամսով), հետազոտական առումով ակնհայտ էր, որ այդ իրավիճակը խնդրո առարկայի վերաբերյալ անխուսափելիորեն բերում է ճշգրտումներ: Մասնավորապես՝ արտակարգ դրության պայմաններում մտցվեցին խոսքի եւ տեղաշարժի ազատության սահմանափակումներ, կյանքի իրավունքի իրացումը դարձավ ամենահրատապը: Աշխատանքային գործունեություն իրականացնելու, հանրային տրանսպորտի գործարկման արգելքի հետեւանքով մարդու հիմնարար իրավունքներին դեմ հանդիման առավել սրվեցին սոցիալ-տնտեսական խնդիրները: Այդպիսով ստեղծվեց մի իրավիճակ, երբ մի կողմից մարդու որոշ հիմնարար իրավունքների սահմանափակումից ի հայտ եկան անհարմարություններ: Մյուս կողմից՝ սրվեց սոցիալ-տնտեսական կացությունը, որը այս հետազոտությանն ուղղորդող սոցիալական արդարության հայեցակարգի տեսանկյունից կարծես ստվերում է առաջինի՝ մարդու հիմնարար իրավունքների

նշանակությունը: Եվ այդպիսով, հետխորհրդային Հայաստանին բնորոշ սոցիալական արդարության այս երկու կողմերի՝ մարդու հիմնարար իրավունքների եւ սոցիալ-տնտեսական (ան)հավասարությունների ու հավասար հնարավորությունների միջեւ լարումը նորովի գործարկվելու եւ ծավալվելու «հեռանկար» ստացավ:

Բայց անգամ այդ պայմաններում հանրային-քաղաքական խոսույթի հիմնական դերակատարները ձգտում էին պահպանել այն գաղափարական-արժեքային կողմնորոշումները, որոնք դրսևորում էին հեղափոխական եւ հետհեղափոխական շրջանի առաջին երկու տարիներին: Այդպիսի մի տիպական օրինակ էր արտակարգ դրության ռեժիմում գործող վարչապետի ուղերձում հնչած «յուրաքանչյուր կյանք անգին է»⁴⁴ ձեռակերպումը, որը օրգանապես շարունակում կամ վերաձեռակերպում է մինչ այդ տարբեր առիթներով հնչած «ՀՀ-ում մարդը բարձրագույն արժեք է» պնդումը:

Վերլուծական զեկույցի այս մասում կանդրադառնանք պաշտոնական փաստաթղթերին, հրապարակային ելույթներին, քաղաքական-հրապարակային գործիչների՝ ԶԼՄ-ներին տված հարցազրույցներին, կուսակցական, նախընտրական ծրագրերին: Դրանք յուրահատուկ կերպով լակմուսի թուղթ են հետազոտության թեմայի առնչությամբ: Բնականորեն, կախված նրանից, թե պաշտոնական փաստաթուղթ է, նախընտրական ծրագիր, հրապարակային ելույթ կամ ԶԼՄ-ներին տված հարցազրույց՝ ի հայտ են գալիս որոշ ոճական տարբերություններ, անգամ դիտարկվող քաղաքական արժեքները շեշտադրելու որոշ տարբերություններ: Սակայն այս շարադրանքում այդ տարբերությունների մասին խոսք չի լինելու, այլ ավելի շուտ ներկայացվելու է քիչ թե շատ մի ընդհանրական պատկեր՝ իրականում կոպտացված, որը գծագրվում է այդ տարաբնույթ տեքստերին անդրադառնալիս:

Հետազոտության ընթացքում խնդրո առարկայի վերաբերյալ ի հայտ եկավ մի տիպական գիծ. հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերման տեսանկյունից իրականում թեմականացվել են մի շարք

⁴⁴ «Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ուղերձով դիմել է ժողովրդին», *Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ*, 24 Մարտի, 2020, առցանց՝ <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2020/03/24/Nikol-Pashinyan-Speech/>, այց՝ 25.03.2020:

իրողություններ, որոնք վերաբերում են անցյալին՝ մինչև հեղափոխական շրջանին: Բայց հիմնականում դրանք դուրս են մնացել սոցիալական արդարության վերոհիշյալ շրջանակի, հետևաբար սոցիալական արդարության հետ մարդու հիմնարար իրավունքների հարաբերման մեջ ձեռակերպվելուց: Վերջին հանգամանքն ի հայտ եկավ նաև փորձագետների հետ խորին հարցազրույցների ժամաակ: Այսինքն՝ սոցիալական արդարության գաղափարն այս առումով հանդես է գալիս առավել «ստվերային» ձևով: Այդ իրողությունների շարքում են, օրինակ՝ հանքարդյունաբերության ոլորտի խնդիրները, 2008 թվականի Մարտի 1-ի իրադարձությունները, «Հյուսիսային Պողոտա-Կասկադ» քաղաքաշինական նախագծի իրականացումը, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բնագանձման մասին» օրենքի նախագիծն ու դրա ընդունումը, խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների, քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչների կողմից նախորդ ռեժիմին իրավաքաղաքական գնահատական տալու եւ համապատասխանաբար դրա հետեւանքների շտկման ուղղված ռազմավարությունների ու մեխանիզմների մշակումը եւ այլն: Անցյալին հղելու, դրա խնդիրներն արծարծելու միտումը նկատելի է նախ եւ առաջ հրապարակային ելույթներում: Այսպես 2008 թվականի Մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ 2019 թվականին վարչապետ Ն. Փաշինյանի ուղերձում տեղ է գտել մի պնդում, որի համաձայն՝

«Վերադարձ անցյալի բարքերին ու հարաբերություններին չի կարող լինել: Հայաստանը չի վերադառնալու կոռուպցիայի, քաղաքական հետապնդումների, քաղաքական բռնությունների, իրավունքների արհամարհման ու ոտնահարման, ամենաթողության ու լկտիության ժամանակներին»:⁴⁵

Ի շարունակություն՝ նա ներողություն է խնդրում «Հայաստանում տեղի ունեցած բոլոր ընտրակեղծիքների, իշխանության վերնախավի կողմից կազմակերպված եւ

⁴⁵ «ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը Մարտի 1-ի կապակցությամբ», 1 Մարտի, 2019, *Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ*, առցանց՝ <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/03/01/Nikol-Pashinyan-Message/>, այց՝ 19.01. 2020:

համակարգված ապօրինությունների, կոռուպցիայի, քաղաքական սպանությունների համար»:⁴⁶

Անցյալին վերաբերող վերը թվարկված խնդիրներն ուղղակիորեն վերաբերում են մարդու հիմնարար իրավունքներին՝ ընտրական, կյանքի, անձնական ազատության իրավունքներին, խոշտանգումների ու խտրականության արգելքներին, կարծիքի արտահայտման, հավաքների ազատության իրավունքներին եւ այլն, եւ ուղերձի այս մասից ակնհայտ է, որ անցյալը ներկայանում է որպես մարդու բոլոր հիմնարար իրավունքների ոտնահարման իրականություն: Դրանում դեռեւս չենք հանդիպում «անարդարություն» բառին: Սակայն փոխարենը քիչ անց հայտարարվում է, որ

«Հայաստանը իրավունքի ու արդարության, ճշմարտության ու արժեքների երկիր դարձնելն է մեր համատեղ առաքելությունը»:⁴⁷

Եվ ուրեմն՝ բանախոսն անուղղակիորեն անցյալը բնութագրում է որպես անարդար. «անցյալի բարքերն ու հարաբերությունները՝ «կոռուպցիան», «քաղաքական հետապնդումները», «քաղաքական բռնությունները», «ամենաթողության ու լկտիության ժամանակները» մարմնավորում են անարդարությունը: Ուղերձի մեջբերված մասից երեւակվում է անարդարության եւ մարդու (հիմնարար) իրավունքների խախտման միջեւ որոշակի հարաբերություն անցյալում անբացահայտ կերպով: Միաժամանակ իրավունքի եւ արդարության «կողք-կողքի հայտնվելը» հնարավորություն է բացում ապագայում դրանց հարաբերման համար:

Ինչպես ներքին՝ ներհայաստանյան լսարանին, այնպես էլ միջազգային հարթակում դիտարկվող ժամանակաշրջանի հրապարակային ելույթներում Ն. Փաշինյանը շեշտում է «բարեփոխումներ իրականացնելու»,⁴⁸ «արդարության

⁴⁶ «ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը Մարտի 1-ի կապակցությամբ»:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանում», 26 Սեպտեմբերի, 2019, *Հայաստանի Հանրապետության Վարչապետի Կայքէջ*, Սեպտեմբերի 26, 2019, առցանց՝ <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/09/26/Nikol-Pashinyan-74th-session-of-UN-General-Assembly/>, այց՝ 19.01.2020:

ապահովման»⁴⁹ գործում ստանձնած հանձնառությունը, իսկ «մարդու իրավունքների պաշտպանությունը»⁵⁰ հռչակում է «առաջնային խնդիր»:⁵¹

Ուստի սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների հարաբերման առումով նկատելի է հետեւյալ միտումը. ոչ կառուցվածքային կապից՝ մարդու (հիմնարար) իրավունքների իրացումը սոցիալական արդարության մաս չէ, բայց առաջինն ազդում է երկրորդի գոյության վրա, անցում դեպի կառուցվածքային հարաբերման, ուր մարդու հիմնարար իրավունքները դառնում են սոցիալական արդարության մաս:

Բացի հրապարակային ելույթներից՝ անցյալին հղելու միտումը նկատելի է նաեւ մի շարք պաշտոնական փաստաթղթերում: Օրինակ՝ 2019 թվականի փետրվարի 8-ին ընդունված «ՀՀ Կառավարության 2019–2023 թվականների ծրագրում» կարելի է մի ձեւակերպման հանդիպել, ուր արդարության եւ մարդու իրավունքների միջեւ եւս որոշակի հարաբերում է ի հայտ գալիս անցյալի անկյան տակ:

«Հայաստանի Հանրապետության զարգացմանը եւ արժանապատիվ ու երջանիկ քաղաքացի ունենալուն երկար տարիներ խոչընդոտող կարեւորագույն գործոններից մեկն արդարության բացակայությունն էր, ինչն արտահայտվում էր ամենատարբեր ոլորտներում արտոնյալ խավերի, խմբերի եւ անհատների գոյությամբ, օրենքի եւ այլոց իրավունքների նկատմամբ նրանց ամենաթողությամբ եւ անպատժելիությամբ»:⁵²

Այս մեջբերումը ծրագրի «Ազատ, երջանիկ եւ արժանապատիվ քաղաքացի» գլխի հենց առաջին՝ «Օրենքի առջեւ բոլորի հավասարությունը, արդարադատությունը եւ մարդու իրավունքների պաշտպանությունը» ենթակետից է: Այն վկայում է, որ արտոնյալությունը, հետեւաբար նաեւ իրավունքների ու պարտականությունների

⁴⁹ «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանում»:

⁵⁰ ««Հեղափոխությունն ստեղծել է մի միջավայր, որտեղ մարդը բարձրագույն արժեք է, և նրա իրավունքների պաշտպանությունը կառավարության առաջնային խնդիրն է»․ վարչապետը մասնակցել է ՄԻՊ հաստատության գործունեության 15-ամյակի համաժողովին», *Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ*, 26 Նոյեմբերի, 2019, առցանց՝ <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/11/26/Nikol-Pashinyan-Ombuds-15/>, այց՝ 02.02.2020:

⁵¹ Նույն տեղում:

⁵² «ՀՀ Կառավարության 2019–2023 թվականների ծրագիր», 25:

հատկացման մեջ կամայականությունները, իրավունքների խախտումը եւ իրավահավասարության բացակայությունը հանգեցնում է անարդարության, եւ, հակառակը, արտոնյալության, ամենաթողության եւ անպատճելիության իսպառ բացակայությունն է արդարության առկայության վկայությունը: Վերջինս իր հերթին հանգեցնում է պետության զարգացմանն ու քաղաքացու արժանապատվությանն ու երջանկությանը: Եվ ուրեմն՝ վերջինս ուղիղ կախված է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունից եւ երաշխավորումից: Եթե հիշենք, որ հայաստանյան հանրային պատկերացումներում Ջ. Ռուսի սոցիալական արդարության ըմբռնումը նույնական է «արդարություն» բառի հետ, ապա «Կառավարության 2019–2023 թվականների ծրագիրը» շոշափում է սոցիալական արդարության եւ մարդու (հիմնարար) իրավունքների միջեւ կառուցվածքային կապը եւ առավել քան ակնհայտ է ոչ միայն խորքային բարեփոխումների օրակարգի հետ առնչությունը, այլեւ այդ իրավունքների կենտրոնական նշանակությունը:

Ոչ պակաս ուշագրավ է անցյալը պատկերվում մեկ այլ պաշտոնական փաստաթղթում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային 2020-2022 թվականների ռազմավարության» մեջ ըստ որի՝ մարդու իրավունքների երաշխավորումն ու ապահովումը, պաշտպանման մեխանիզմների կենսագործումը «անկախությունից ի վեր հանդիպում է լրջագույն մարտահրավերների»:⁵³ Դրանց շարքում նշվում է ժողովրդավարական հաստատությունների զարգացման աստիճանը, կառավարությունների կողմից իրավունքահենք քաղաքականությունների մշակման ու իրականացման լրջագույն բացը, որոնք էլ հանգեցրել են մարդու իրավունքների կոպիտ խախտումների: Սակայն առավել քան ուշագրավ է հաջորդող մեջբերումը, որում նշվում են դրանց առանձնահատուկ դեպքերը .

«Այս շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ընտրությունների արդյունքների պարբերաբար կեղծումները, ազատ խոսքի եւ ազատ մամուլի նկատմամբ ճնշումները, խաղաղ հավաքների ժամանակ ուժի կիրառումը, իրավունքների դատական պաշտպանության լրջագույն խնդիրները,

⁵³ «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարություն», 9:

խտրականության ու սոցիալական անարդարության դրսևորումները, տնտեսական եւ, հատկապէս, սեփականության իրավունքի կոպիտ խախտումները, եւ, վերջապէս, կոռուպցիան եւ հովանավորչությունը»:⁵⁴

Միաժամանակ վերոհիշյալ ռազմավարությունը շարունակում է, որ այս ամենի հանդէպ կուտակված դժգոհությունն է հանգեցրել 2018 թվականին ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության, «որի խաղաղ բնույթը կարելոր հիմք ու գրավական հանդիսացավ ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների միջոցով իշխանության մարմինների ձեւավորման եւ իրավունքակենտրոն կառավարման համակարգի ստեղծման համար»:⁵⁵

Փաստացի մարդու իրավունքների, այդ թվում՝ հիմնարար իրավունքների խախտումները եւ սոցիալական անարդարությունը հայտարարվում են շրջադարձային քաղաքական իրադարձության՝ թավշյա, ոչ բռնի, ժողովրդական հեղափոխության պատճառ: Մի կողմից բուն իրադարձությունը ներկայացվում է մարդու իրավունքի լեզվով պաշտոնական մակարդակում, մյուս կողմից՝ հենց հեղափոխության հաջողությունը մարդու հիմնարար իրավունքի իրացման պայման է: Այն իր հերթին երաշխավորում է անցումն առավել համապարփակ եւ ինստիտուցիոնալ մակարդակում հասարակական կյանքի իրավունքահենք կառավարմանը: Ակնբախորեն «սոցիալական արդարություն» եզրն այս դեպքում կիրառված է ռուսյան հայեցակետի տեսանկյունից որոշակիորեն նեղացված՝ դեպի սոցիալ-տնտեսական կողմը տանող իմաստով: Սակայն մարդու հիմնարար իրավունքների կողքին բառի երեւան գալը ցույց է տալիս, որ մարդու հիմնարար իրավունքներն ու սոցիալական արդարությունը (անգամ նեղ իմաստով) որպէս առանցքային հանրային արժեքներ առնվազն հավասարապէս կարելորվում են եւ հայտնվում են հանրային առաջնահերթությունների միեւնոյն հարթության մեջ, ուստի նվազագույն փոխառնչության հարաբերության հաստատման տիրույթում:

Քանի որ հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում անցյալին անդրադարձը նշանակալի տեղ է զբաղեցնում, ապա դրա

⁵⁴ «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարություն»:

⁵⁵ Նույն տեղում:

վերախմաստավորման ուղերձով ժամանակ առ ժամանակ հանդես են գալիս նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Նրանց խոսքում «արդարություն» եւ «մարդու իրավունք» բառերը եւս կենտրոնական դերակատարություն ունեն: Այսպես ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը Factor.am-ին տված իր հարցազրույցում, արձագանքելով սահմանադրական փոփոխությունների «Այո»-ի քարոզարշավի շրջանակում 2020 թվականի մարտի 11-ի վարչապետ Ն. Փաշինյանի հնչեցրած հանրաքվեի հռչակագրի նախագծին, որով «հանրաքվեն ոչ միայն Սահմանադրության մեկ հոդվածին, այլ նաև այս հռչակագրին է վերաբերելու, որը վերջին երեք տասնամյակների քաղաքական գնահատականն է»,⁵⁶ պնդում է, որ գնահատականներ պիտի տրվեն ոչ միայն ընտրական համակարգի բռնազավթմանը, այլև կրթության բռնազավթմանը, տնտեսության բռնազավթմանը, պետական և տեղական ինքնակառավարման ամբողջ համակարգի զավթմանը, մարդու հիմնարար իրավունքների համակարգային ոտնահարմանը, անպատժելիությանը, արտագաղթի խթանմանը, հանքահենությանը, լրատվամիջոցների ազատությունների անօրինական սահմանափակմանը և այլն:⁵⁷ Անդրադառնալով հռչակագրի տեքստի ծավալին՝ նա նշում է.

«Ծավալն այնքան էական չէ, որքան ճշգրտությունը, հաշվենկատությունը, արդարության վերականգնման շեշտադրումը, քաղաքացիներին երկրի երկարաժամկետ զարգացման հստակ և հասկանալի ուղենիշերի մատուցումը»:⁵⁸

Վերոշարադրյալը թույլ է տալիս՝ հաստատելու, որ դիտարկվող ժամանակահատվածում հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում շրջանառվում է մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտումների, արտոնյալության/խտրականության դրսևորման ու անարդարության միջև առկա ուղղակի կապ: Ակնհայտ է նաև, որ հանրային-քաղաքական խոսույթի մակարդակում

⁵⁶ «Փաշինյանը հռչակագրի նախագիծ է հրապարակում», *Ազատություն*, 11 Մարտի, 2020, առցանց՝ <https://www.azatutyun.am/a/30481268.html>, այց՝ 13.03.2020:

⁵⁷ «Հարկավոր է անվանական մատնանշել բոլոր այդ հանցագործությունների գլխավոր դերակատարներին. Լևոն Բարսեղյանը՝ վարչապետի հրապարակած հռչակագրի մասին», *factor.am*, 11 Մարտի, 2020, այց՝ 13.03. 2020, <https://factor.am/228866.html>:

⁵⁸ Նույն տեղում:

առավել ակտիվ դերակատարները անցյալում մարդու հիմնարար իրավունքների ոտնահարման ու անարդարության դրսևորումների հանդեպ հստակ դիրքորոշումը դարձնում են ապագայում իրականացվելիքին ուղղված քայլ՝ արդարության վերականգնման եւ ապահովման ուղենիշով, որում մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը առաջնային խնդիր է: Եվ սա դաշտ է բացում այս երկու՝ սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների որպես գաղափարների ու արժեքների սերտ փոխառնչման ու հարաբերման համար:

Ուշագրավ է նաեւ այս երկու արժեքներին՝ սոցիալական արդարությանն ու մարդու հիմնարար իրավունքներին հղելու հաճախականությունն ու խորությունը: Այդ առումով սիմպտոմատիկ են պաշտոնական փաստաթղթերը: Ընդ որում՝ վստահաբար կարելի է պնդել, որ

ա) պաշտոնական փաստաթղթերի լեզուն շաղախված է մարդու իրավունքների լեզվով,

բ) մշակվող ու գործադրվելիք քաղաքականություններն էլ բնութագրվում են որպես իրավունքահենք քաղաքականություններ:

Որպես տիպական օրինակ է «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 թվականների ռազմավարության նախագիծը», որի հիմնական սկզբունքներում նշված է.

«Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական հիմնական սկզբունքը իրավունքահենք լինելն է, ինչը նշանակում է, որ մշակվող և իրականացվող քաղաքականությունների կենտրոնում մարդու իրավունքներն են և առաջարկվող լուծումներն ու կարգավորումները ելնում են իրավունքների իրացման առաջնահերթությունից»:⁵⁹

Հետևաբար օրինաչափորեն «մարդու իրավունքներ», «մարդու իրավունքների պաշտպանություն կամ ապահովում» կամ «մարդու իրավունքների ոտնահարում»

⁵⁹ «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 թվականների ռազմավարության նախագիծ»: Ռազմավարության նոր նախագծում այս ձեւակերպումը չկա, բայց պահպանված է մարդու իրավունքների եւ սոցիալական արդարության սկզբունքների առանցքայնությունը:

բառակապակցություններին առավել հաճախ կարելի է հանդիպել հետհեղափոխական Հայաստանում ընդունված առանցքային փաստաթղթերում:

Պատկերը տրամագծորեն այլ է, երբ խոսք է գնում սոցիալական արդարության մասին: Պաշտոնական փաստաթղթերում «սոցիալական արդարություն» կամ (ան)արդարություն բառերի գործածությունը խիստ սակավ է: Այս երեք պաշտոնական փաստաթղթերից միայն «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 ռազմավարության նախագիծ» մեջ են հիշատակումները համեմատաբար ավելին: Բացի դրանից՝ միայն վերջինում է սոցիալական արդարությունը նպատակ հայտարարված, իսկ արդարությունը՝ մարդու ու հանրության զարգացման համար առաջնահերթ կարեւորություն ունեցող հիմնական ու ոչ նյութական պահանջմունք:⁶⁰

Պաշտոնական փաստաթղթերում համեմատաբար հաճախ կարելի է հանդիպել «արդար» բառի կիրառությանը՝ «արդար ընտրություններ», «գործի արդար դատաքննության իրավունք»,⁶¹ «արդար մրցակցություն», «պետական գնումների արդար եւ թափանցիկ համակարգ», «արդար միջավայր»,⁶² «ապրանքների եւ ծառայությունների արդար բաշխում»:⁶³

Պաշտոնական խոսույթի պարագայում ազատական-ժողովրդավարական գաղափարաբանական շրջանակի տեսանկյունից կարծես ի հայտ է գալիս մասնատում. «արդարություն» բառը գործածվում է մարդու իրավունքների հետ ուղիղ, կառուցվածքային հարաբերման մեջ, իսկ «սոցիալական արդարությունը» կարծես ավելի շուտ հղում է (ան)հավասարությանն, (ան)հավասար հնարավորություններին հղացքին: Այդպիսով հղացական առումով տեսական շրջանակ հանդիսացող արդարության տեսությունը, որում մարդու հիմնարար իրավունքների իրացումը

⁶⁰ «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 թվականների ռազմավարության նախագիծ»: Ռազմավարության նոր նախագծում «սոցիալական արդարություն» բառը հիշատակված է մեկ անգամ եւ սահմանված է որպես սկզբունք:

⁶¹ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարություն»

⁶² Տե՛ս «Կառավարության 2019–2023 թվականների ծրագիր»:

⁶³ «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 թվականների ռազմավարության նախագիծ»:

սոցիալական արդարության էական բաղադրիչն է, տրոհվում է: Թուլանում է նաև մարդու հիմնարար իրավունքների իրացման եւ հարցի սոցիալ-տնտեսական կողմի միջև էական կապը, որի շեշտադրումը պակաս կարելու չէ հետխորհրդային շրջանի աղքատության բազմաչափության խորքային գիտակցման համար թե՛ քաղաքականության մշակողների ու իրականացնողների, թե՛ հանրության լայն շրջանակի կողմից:

Հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերման վերաբերյալ այս հետազոտության շրջանակում իրականացված խորին հարցազրույցներում փորձագետները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները գրեթե միաբերան պնդում էին, որ ներկայումս այդ խոսույթի վրա հսկայական ազդեցություն ունի Նիկոլ Փաշինյանի տարբեր առիթներով հնչեցրած խոսքը: Սա, ըստ էության, պայմանավորված է ոչ միայն ինքնին զբաղեցրած պաշտոնի նշանակությամբ, այլև մեզանում իրողություններն անձնավորվելու մեծ չափով:

Դիտարկվող ժամանակաշրջանի հանրային-քաղաքական խոսույթում խորքային փոփոխությունների օրակարգի հետ սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների հարաբերման առումով շատ տիպական է 2018 թվականի հունիսի 16-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 5-րդ համաժողովում Ն. Փաշինյանի ելույթը: Այն խտացնում է հեղափոխական գործընթացներում հնչող գաղափարներն ու կողմնորոշում հետհեղափոխականինը: Շեշտը դնելով հանրային կյանքի տարբեր բնագավառներում «անհատական ջանքի, [...] անհատական պատասխանատվության»⁶⁴ վրա եւ վկայակոչելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագիրը՝ բանախոսը նշում է.

⁶⁴ «Նիկոլ Փաշինյանի ելույթը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 5-րդ համաժողովում», *Civilnet*, 17 Հունիսի, 2019, առցանց <https://www.civilnet.am/news/2019/06/17/%C2%AB%D5%94%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%C2%BB-%D5%AF%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%A1%D5%B2%D5%A1%D6%83%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8/362872>, այց՝ 10.02.2020:

««Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները ձգտում են հասնել ՀՀ քաղաքացիների հասարակական, իրավական, կենցաղային նոր հարաբերությունների հաստատմանը՝ հիմնված օրենքի առաջ բուրի հավասարության, մարդու իրավունքների պաշտպանության և կիրառելիության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, հայ ժողովրդի ազգային պետական ինքնության, ինքնիշխանության պահպանման և զարգացման, հայ ժողովրդի բնակության և զարգացման գերադասելի վայրի կարգավիճակը վերահաստատելու հրամայականի վրա: Սա նշանակում է, որ իր հայրենիքում անվտանգ ապրելու հայ ժողովրդի իրավունքը չի կարող և չպետք է որևէ մեկի կողմից կասկածի տակ առնվի»:⁶⁵

Սակայն խնդրո առարկայի վերաբերյալ թերեւս ամենաանկյունաքարային հատվածը, որը հետագայում որակվեց որպես հետգաղափարաբանական եւ, ըստ էության, խորությամբ բացահայտում է ազատական-ժողովրդավարական գաղափարախոսության ներկայացվածությունը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում, հետեւյալն է.

«Մեզ շատ հաճախ անվանում են լիբերալ, կամ ցենտրիստ, բայց սա թյուրըմբռնում է, որովհետև մենք կուսակցություն ենք, որ մերժել ենք իզմերը, որովհետև ժամանակակից աշխարհում կարծրացած գաղափարախոսություններ այլևս գոյություն չունեն: Քաղաքական իմաստով մենք լիբերալ չենք, ցենտրիստ չենք, սոցիալ-դեմոկրատ չենք, մենք քաղաքացիական կուսակցություն ենք: Ի՞նչ է սա նշանակում գործնականում, սա նշանակում է, որ մենք մեզ դուրս ենք դնում գաղափարախոսական ստանդարտներից և ձևավորում ենք գաղափարական նոր հարթություն, որը հիմնված է չորս առանցքային սյուների վրա՝ պետականություն, քաղաքացիություն, ազգային ինքնություն, անհատականություն»:⁶⁶

Վերջին ձեռակերպումների համատեքստում ոչ պակաս ուշագրավ է «Քաղաքացու որոշում» եւ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների 2018 թվականի դեկտեմբերին կայանալիք Ազգային ժողովի ընտրություններին քարոզարշավին

⁶⁵ «Լիկոլ Փաշինյանի ելույթը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 5-րդ համաժողովում»:

⁶⁶ Նույն տեղում:

ներկայացվելիք նախընտրական ծրագրերը: Ընդ որում՝ առաջին կուսակցությունն իրեն դիրքավորում է որպես ձախակական կուսակցություն, իսկ երկրորդն ակնհայտորեն ձգտում է դեպի քաղաքական սպեկտրի աջ կողմը:

Առաջինի ծրագրում հանդիպում ենք խնդրո առարկայի վերաբերյալ հետևյալ առանցքային ձեռակերպումը.

«Կուսակցությունը սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության արժեքների կրող է, ինչը ենթադրում է, որ սոցիալական արդարությունը, մարդու բարեկեցությունն ու մարդու իրավունքները գերազույն արժեքներ են: Այս արժեքների իրագործման համար անհրաժեշտ նախապայմաններն են մասնակցայնությունը և սոցիալական-շուկայական տնտեսությունը, որին պետությունը միջամտում է՝ նպատակ ունենալով իր քաղաքականություններով կանխել շուկայի ձախողումները և/կամ շտկել դրանք: [...] Մեր գաղափարախոսությունը հիմնված է մարդու իրավունքների անբաժանելի և համընդհանուր լինելու, ինչպես նաև մարդու իրավունքների, ժողովրդավարության և սոցիալական զարգացման արժեքների փոխկապակցվածության սկզբունքների վրա: Ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված կառավարումը քաղաքացիական, քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավունքների իրականացմանը ուղղված դրական փոփոխությունների նախապայման է, որը պետք է նպաստի բարեկեցության, եկամտի և հնարավորությունների անհավասարության հաղթահարմանը: Այլ կերպ ասած, մարդու իրավունքների պահպանման և պաշտպանության համար լավագույն կառավարման տարբերակը ժողովրդավարությունն է: Քաղաքական և քաղաքացիական իրավունքները և ազատությունները նույնքան կարևոր են, որքան՝ և՛ սոցիալական, և՛ տնտեսական իրավունքների իրացումը»:⁶⁷

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագրի ներածականում տրված ընտրություններում մասնակցելու հիմնավորումը եւս ուշագրավ է: Ընդգծելով, որ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը ազատական, առաջադիմական լուծումների և բարեփոխումների միջոցով զարգացմանը միտված

⁶⁷ «ԲՈ նախընտրական ծրագիր»:

կուսակցություն է»,⁶⁸ որի «տեսլականը հավասար հնարավորություններով և արդիականացված Հայաստանն է, որտեղ մարդը ոչ թե միջոց է, այլ՝ նպատակ»,⁶⁹ հետամուտ է «արժանապատիվ ազգային ինքնության արժեհամակարգի պահպանմամբ Հայաստանում եվրոպական չափանիշների, ժողովրդավարական, անվտանգ, օրենքի գերակայության, սոցիալական արդարության, բարեկեցիկ և հզոր պետության կառուցման նպատակին»:⁷⁰

Վերջին դեպքում էլ արդարությունը հղում է իրավունքին, սոցիալական արդարությունը կարծես ավելի շուտ հավասար հնարավորություններին ու սոցիալ-տնտեսական իրողություններին: Միաժամանակ բավական խրթին ձևակերպմամբ իրավունքի գերակայության ամբողջական կենսագործման հնարավոր քայլերի մեջ նշվում է «իրավունքի, որպես մարդու՝ համընդհանուր և անհրաժեշտ ազատության, հավասարության (հավասար հնարավորությունների) և արդարության անհրաժեշտ ձևի սահմանումը»:⁷¹

Վերոհիշյալ մեջբերումները թույլ են տալիս՝ ասելու, որ այս հետազոտության մեջ սոցիալական արդարության ընտրված շրջանակը, որում մարդու հիմնարար՝ քաղաքական ու քաղաքացիական իրավունքների իրացումն առանցքային նշանակություն ունեն, հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում ներկայացված է բեկված, մասնատված եւ ցրված:

«Քաղաքացիական պայմանագիր» է՛լ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների ծրագրերի դեպքում մուտք են գործում ազգայնական գաղափարաբանության տարրեր: Դրա լավագույն ապացույցը ազգային ինքնության, արժանապատիվ ազգային ինքնության արժեհամակարգի պահպանմանը հղելու ձգտումն է, որով ազատական-ժողովրդավարական մոդելին բնորոշ անհատականության, ազատության, քաղաքացիության գաղափարները

⁶⁸ ««Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագիր»:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Նույն տեղում:

վերաձեւակերպվում են հայկական ազգայնականությանը բնորոշ ազգային ինքնության ու պետականության գաղափարներով:

«Քաղաքացու որոշում» կուսակցության ծրագրի դեպքում բնականորեն ձախակն հայացքները վերափոխում են ազատական-ժողովրդավարական շրջանակի սահմանները, որում մարդու հիմնարար իրավունքները հավասարապես կարելուովում են սոցիալ-տնտեսական կողքին: Միաժամանակ մարդու իրավունքների, ժողովրդավարության և սոցիալական զարգացման արժեքների փոխկապակցվածության շեշտադրումը ամուր հող է ստեղծում սոցիալական արդարության հետ մարդու հիմնարար իրավունքների սերտ փոխառնչման համար:

Հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում ոչ պակաս ուշագրավ է այն, թե եթե ոչ ուղղակի կամ բացահայտ, ապա անուղղակի ու անբացահայտ կերպով սոցիալական արդարության հետ հարաբերման մեջ հատկապես մարդու հիմնարար իրավունքներից, որոնք են առավել քննարկման առարկա դարձել, իսկ որոնք՝ անտեսվել: Վերոհիշյալը թույլ է տալիս պնդելու, որ անցյալին անդրադառնալիս հիշատակվում են մարդու գրեթե բոլոր հիմնարար իրավունքները: Բայց նաև որոշակի շեշտադրում կա «օրենքի առջև բոլորի հավասարության», «խտրականության արգելքի», «ընտրական», «ազատ խոսքի ու հավաքների» իրավունքների վրա: Ընդ որում՝ 2018 թվականի դեկտեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրություններին ընդառաջ հատկապես շեշտադրվել է ընտրական իրավունքի կարելուությունը: Այսպես Մեդիամաքս գործակալության «Կարմիր թել» շարքին տրված իր հարցազրույցում իշխանություն լինելու լավ ու վատ կողմերի մասին հարցին ի պատասխան, Ազգային ժողովի փոխնախագահ Լենա Նազարյանը նշում է.

«Որոշում կայացվեց, որ ընտրություններն այլևս չեն կեղծվում՝ ո՛չ հիմա, ո՛չ ապագայում: Եվ սա ուղղակի հեղափոխեց իրականությունը: Երբ որ մարդը վստահ է, հանգիստ մտածում է եւ գնում է ընտրություն կատարելու եւ գիտի որ իր քվեն չի կեղծվի, այս գիտակցումը մի քանի անգամ նվազեցնում է հանրային լարվածությունը: Եվ փոխվում է մարդու միտքը, մարդու կեցվածքը, կենսակերպը, խոսքը, ձգտումները: Շատ բան է փոխվում մարդու մեջ: Մարդը իր երկրում իրեն ուժեղ է զգում: Երբ որ

մարդը չի վաճառում իր ձայնը լրության դիմաց, նա գիտի, որ այդ ձայնը յուրաքանչյուր պահին կարող է բարձրաձայնել եւ պահանջ ներկայացնել իր կարիքների համար: Կոտրվում է ընտրակեղծարարությունների համակարգը, անօրինական ազդեցությունների համակարգը: Այնքան վստահություն, լավատեսություն է կուտակվում, որ իսկապես բավարար է շատ կարեւոր, մեծ բարեփոխումներ երկրում իրականացնելու համար»:⁷²

Հարցազրույցից մեջբերված հատվածն ի ցույց է դնում այս իրավունքի կարեւորումը սոցիալական արդարության հետ հարաբերման մեջ, քանի որ, ըստ բանախոսի, այն ինքնին հեղափոխել է իրականությունը եւ հնարավորություն ընձեռել բարձրաձայնել սեփական պահանջների համար: Բայց (սոցիալական) արդարությունը այս դեպքում էլ անբացահայտ ու «ստվերային» կերպով է ներկա:

Վերոհիշյալ ասպեկտով հետաքրքրական է նաեւ 2019 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարությունը» եւ դրան կից գործողությունների ծրագիրը: Ռազմավարության մեջ մարդու հիմնարար՝ քաղաքական ու քաղաքացիական իրավունքներից նշված են միայն հինգը.

- Կյանքի իրավունքը,
- Խոշտանգումների արգելք,
- Գործի արդար քննության իրավունք,
- Հավաքների ազատություն,
- Կարծիքի արտահայտման ազատություն:

Ներածության մեջ մարդու իրավունքների պաշտպանությունը ամրագրված է որպես նպատակ, «որի իրականացմանն ուղղված պետք է լինեն հանրային իշխանության բոլոր մարմինների համատեղ ջանքերը»:⁷³ Ընդ որում՝ մի կողմից ՀՀ Սահմանադրությունը, մյուս կողմից՝ միջազգային պայմանագրերի՝ «Քաղաքական ու

⁷² «Կարմիր թել» Լենա Նազարյանի հետ, Մեդիամաքս, Մարտի 11, 2020, առցանց՝ <https://www.youtube.com/watch?v=b6nbhPTC26M>, այց՝ 12.03.2020:

⁷³ «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 թվականների ազգային ռազմավարություն», 3:

քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի», «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան», «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան», «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան» եւ այլ միջազգային կոնվենցիաների, կողմ լինելը վկայակոչվում են որպես այդ իրավունքահենք քաղաքականության հիմնական գրավական: Այսպես նաեւ այդ միջազգային պայմանագրերը դառնում են իրավունքահենք քաղաքականությունների մշակման ամուր շարժառիթներից մեկը:

Պատահական չէ նաեւ, որ ռազմավարության մեջ մարդու իրավունքների պաշտպանվածության առումով ի հայտ եկող խնդիրները նշվում են հինգ ուղղություններով, որոնք անցյալի ժառանգությունն են.

- Զինված ուժերում եւ ազատությունից զրկման վայրերում մահվան, վատ վերաբերմունքի դեպքերը, դրանց կապակցությամբ ոչ արդյունավետ քննությունը:
- Արդար դատաքննության իրավունքի իրացման ոչ բավարար պայմանները, դատական համակարգի անկախության եւ անկողմնակալության շուրջ լուրջ կասկածները, հանրության անվստահությունը դատարանների նկատմամբ:
- Իրավահավասարության մթնոլորտի եւ գործելակերպի ապահովման, բոլոր հիմքերով խտրականության դեմ պայքարի ուղղությամբ անբավարար քայլերը:
- Հավաքների ազատության իրացման նկատմամբ իշխանությունների ոչ իրավաչափ սահմանափակումները եւ չափազանց կոշտ արձագանքը:
- Առանձին խոցելի խմբերի՝ երեխաների, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին եւ փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ բռնության եւ մարդու իրավունքների այլ խախտումների նկատմամբ պետության անհամարժեք արձագանքը:⁷⁴

⁷⁴ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանության 2020–2022 ազգային ռազմավարություն»:

Փաստորեն անբացահայտ կերպով ռազմավարությունը ելնում է, որ ներկայում առնվազն ընտրական իրավունքը, պետական պաշտոն գրավելու կամ հանրային ծառայության անցնելու իրավունքները հետհեղափոխական Հայաստանում իրացվում են:

Այսպիսով, հիմնվելով սույն գլխի բովանդակության վրա՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- Ընդունելով այն հանգամանքը, որ հետխորհրդային շրջանում ձեւավորվել է մարդու հիմնարար իրավունքների իրացման եւ սոցիալ-տնտեսական (ան)հավասարությունների ու հավասար հնարավորությունների ապահովման միջեւ որոշակի լարում, հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերման տեսանկյունից անցյալի իրականության թեմականացումը նշանակալի տեղ է զբաղեցնում:
- Բայց սոցիալական արդարության ռոլյան հայեցակարգի անկյան տակ այդ իրականության դրվագների մի մասը, որոնք, որպես խնդիրներ, շարունակում են արդիական լինել ներկայում, դուրս են մնացել սոցիալական արդարության հետ մարդու հիմնարար իրավունքների (կառուցվածքային) հարաբերման շրջանակում ձեւակերպվելուց, ինչի հետեւանքով սոցիալական արդարության գաղափարը գերազանցապես հանդես է գալիս «ստվերային» ձեւով:
- Միաժամանակ պաշտոնական խոսույթում, որի լեզուն իրավունքի լեզուն է, երեւակվում է անարդարության եւ մարդու (հիմնարար) իրավունքների խախտման միջեւ որոշակի հարաբերություն անցյալում անբացահայտ կերպով: Իսկ սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների հարաբերման առումով նկատելի է մի միտում, երբ ոչ կառուցվածքային կապից՝ մարդու (հիմնարար) իրավունքների իրացումը սոցիալական արդարության մաս չէ, անցում դեպի կառուցվածքային հարաբերման, ուր մարդու հիմնարար իրավունքները դառնում են սոցիալական արդարության մաս:

- Ընդունելով նաեւ այն հանգամանքը, որ հայաստանյան հանրային պատկերացումներում Ջ. Ռոլսի սոցիալական արդարության ըմբռնումը նույնական է «արդարություն» բառի հետ, պաշտոնական խոսույթում «արդարություն» եւ «սոցիալական արդարություն» բառերի գործածությունը խիստ սակավ է: Օրինաչափորեն «մարդու իրավունքներ», «մարդու իրավունքների պաշտպանություն կամ ապահովում» կամ «մարդու իրավունքների ոտնահարում» բառակապակցություններին առավել հաճախ կարելի է հանդիպել:
- Միաժամանակ պաշտոնական խոսույթում ազատական-ժողովրդավարական գաղափարաբանական շրջանակի տեսանկյունից կարծես ի հայտ է գալիս մասնատում. «արդարություն» բառը գործածվում է մարդու իրավունքների հետ ուղիղ, կառուցվածքային հարաբերման մեջ, իսկ «սոցիալական արդարությունը» կարծես ավելի շուտ հղում է (ան)հավասարությանն, (ան)հավասար հնարավորություններին հղացքին: Այդպիսով հղացական առումով տեսական շրջանակ հանդիսացող արդարության տեսությունը, որում մարդու հիմնարար իրավունքների իրացումը սոցիալական արդարության էական բաղադրիչն է, տրոհվում է:
- Կառավարող ուժում չներառված եւ ընդդիմություն հաղիսացող քաղաքական ուժերի պարագայում նկատելի է մի կողմից պաշտոնական խոսույթի հետ նմանություն: Մասնավորապես՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության դեպքում արդարությունը հղում է իրավունքին, սոցիալական արդարությունը կարծես ավելի շուտ հավասար հնարավորություններին ու սոցիալ-տնտեսական իրողություններին:
- Այս հետազոտության մեջ սոցիալական արդարության այս ազատական-ժողովրդավարական շրջանակը հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում ներկայացված է բեկված, մասնատված եւ ցրված: «Քաղաքացիական պայմանագիր» ե՛ւ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների ծրագրերի դեպքում մուտք են գործում ազգայնական գաղափարաբանության տարրեր: «Քաղաքացու որոշում» կուսակցության ծրագրի դեպքում բնականորեն ձախական հայացքները վերափոխում են

ազատական-ժողովրդավարական շրջանակի սահմանները, որում մարդու հիմնարար իրավունքները հավասարապես կարելուովում են սոցիալ-տնտեսականի կողքին:

- Անցյալին անդրադառնալիս սոցիալական արդարության հետ հարաբերման մեջ մարդու հիմնարար իրավունքներից հիշատակվում են մարդու գրեթե բոլոր հիմնարար իրավունքները: Պաշտոնական խոսույթում որոշակի շեշտադրում կա հատկապես «օրենքի առջև բոլորի հավասարության», «խտրականության արգելքի», «ընտրական», «ազատ խոսքի ու հավաքների» իրավունքների վրա: 2018 թվականի դեկտեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրություններին ընդառաջ հատկապես շեշտադրվել է ընտրական իրավունքի կարելուությունը, բայց (սոցիալական) արդարության անբացահայտ ու «ստվերային» կերպով: Միաժամանակ ներկայում առնվազն ընտրական իրավունքը, պետական պաշտոն գրավելու կամ հանրային ծառայության անցնելու իրավունքները հետհեղափոխական Հայաստանում համարվում են իրացվող իրավունքներ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀՈԴԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

(ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԹՈՒՆՔՆԵՐ)

Վերլուծական փաստաթղթի այս մասում անդրադառնալու ենք այն խորին հարցազրույցներին, որոնք հետազոտական թեմայի շրջանակում անցկացվել են փորձագետների, հանրային-քաղաքական գործիչների հետ ինչպես քաղաքացիական հասարակությունից, այնպես էլ պետական շրջանակներից:

Մարդու (հիմնարար) իրավունքների խոսույթը եւ սոցիալական արդարության խոսույթը:

Անհատական խորին հարցազրույցների արդյունքում ի հայտ եկան մի շարք իրողություններ, որոնք ազդել ու ազդում են հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթի վրա եւ պայմանավորում նրա բնութագիրը, հատկապես՝ սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերման տեսանկյունից:

Խորին հարցազրույցների վերլուծությունը թույլ է տալիս՝ պնդելու, որ հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում անկախությունից ի վեր մարդու հիմնարար իրավունքների խոսույթը եւ սոցիալական արդարության խոսույթը ծավալվել են գլխավորապես միմյանցից անջատ: Դրանք նաեւ հավասարաչափ շրջանառված չեն, եւ նման միտումը դեռ հիմնականում պահպանվում է հետհեղափոխական շրջանի առաջին երկու տարիներին:

«Իրավունքի մասին առանձին խոսվում է, և սոցիալական արդարության մասին առանձին խոսվում է, բայց վստահ չեմ, որ իրար հետ կապակցված: Իհարկե, շատ է ասվում, որ այս մարդը այս իրավունքը ունի, այն ինչը ունի: Չպետք է, ենթադրենք, անձնական կյանքին դիպչել, կամ այսինչ բանը պիտի չարվի: Բայց դա առանձին է

խոսվում, իսկ սոցիալական արդարության մեջ ավելի շատ խոսվում է, որ կրթությունը պետք է հասանելի լինի, բայց խոսվում է կրթության մասին որպես սոցիալական պրոբլեմ» (Ալինա Պողոսյան, սոցիոլոգ):

Ընդ որում՝ մեզանում առաջինը՝ մարդու (հիմնարար) իրավունքները, հիմնականում կապել են ազատականության, իսկ երկրորդը՝ սոցիալական արդարությունը, ձախսականության՝ սոցիալիզմի, սոցիալ-դեմոկրատիայի հետ: Ըստ փորձագետների՝ Հայաստանում առավելապես ձախսականությանը հարող շրջանակներն են ավելի շուտ եւ ավելի շատ գործածել «սոցիալական արդարություն» բառը, քան՝ ազատականության հետեւորդները: Որպես այդպիսին՝ ընկալումներում ամրապնդվել է նաեւ, որ մարդու (հիմնարար) իրավունքների մասին խոսելիս առավելապես հղում են արել անհատին, իսկ սոցիալական արդարության մասին խոսելիս՝ կոլեկտիվին, մեծ խմբերին:

«Սոցիալական արդարության՝ քաղաքացիների իրավունքների հետ կապված խնդիրը, իմ կարծիքով անկախությունից ի վեր, ըստ էության, փոխկապակցված չեն: Այսինքն՝ սոցիալական արդարության խնդիրը դուրս է մղվել երկրորդական պլան, և նույնիսկ, ես կասեմ, մինչև հիմա: Սկզբնական շրջանում դա դիտարկվում էր այսպես՝ խորհրդային գաղափարախոսական քաղաքական վերապրուկ կամ ժնաջուկ և բացարձակապես հանրային տիրույթում քննարկումներին նույնիսկ քաղաքական դեբատների և այլնի մեջ այդ թեմաները չէին շոշափվում» (Արսեն Հակոբյան, ազգագրագետ):

Հարցազրույցի մասնակիցները նշում էին, որ հիմնականում միմյանցից տարանջատված լինելով՝ մարդու հիմնարար իրավունքների խոսույթը անկախությունից ի վեր հայաստանյան հանրային-քաղաքական տիրույթ ավելի վաղ է մուտք գործել եւ հետհեղափոխական շրջանի համատեքստում առավել զարգացած է, քան սոցիալական արդարության մասին խոսույթը:

Այս երկու խոսույթների տարանջատվածությունն ու անհամաչափ կերպով ներկայացվածությունը հանրային-քաղաքական տիրույթում, հանգեցրել է նաեւ նրան,

որ ֆորմալ առումով մարդու (հիմնարար) իրավունքների խոսույթը ծայրահեղացվել է ու դրա հետեւանքով մասամբ կորցրել իր ազդեցիկությունը:

Ընդ որում՝ սոցիալական արդարության թեման ժամանակ առ ժամանակ հանրային-քաղաքական խոսույթ են բերում առանձին իրադարձություններ: Հետհեղափոխական Հայաստանում այդպիսի իրադարձություն են նշել, օրինակ՝ հարկային օրենսգրքում նախատեսված փոփոխությունները, որով անցում էր կատարվում պրոգրեսիվ հարկումից դեպի համահարթ հարկման, Ամուլսարի խնդիրը, կոռուպցիայի դեմ պայքարի եւ այն արմատախիլ անելու հետհեղափոխական ծրագրերն ու քաղաքականությունները:

Փորձագետներից մեկի համոզմամբ մեզանում ավանդաբար ի սկզբանե խնդիր է դրված եղել ձեւը համապատասխանեցնելու այս կամ այն կոնվենցիային, բայց բովանդակային կողմը մնացել է բաց, եւ իրական խնդիրը, հատկապես հետհեղափոխական շրջանում բովանդակություն ստեղծելն է, իսկ սոցիալական արդարությունը հենց ուղղակիորեն վերաբերում է բովանդակությանը:

«Մեր բոլոր իրավական ակտերը ձեւի մասին են, ֆորմալացնում են հարաբերությունները, բայց այդ հարաբերությունների կոնտենտը, իսկ այդ կոնտենտը սոցիալական արդարությունն է, մարդու իրավունքներն են, ժամանակ է չգրված տիրույթում, իսկ դրա համար մենք տեսնում ենք չգրված տիրույթը շատ կախված է քաղաքական ուժից: Այսինքն՝ եթե չգրված օրենք է խաղի կանոնները, կոնտենտը ձևավորում է այն քաղաքական ուժը, որը գալիս է: Հետևապես մենք ենք ձևավորում կոնտենտ» (Գայանե Հովակիմյան, հանրային ծառայող/սոցիոլոգ):

Մյուս կողմից՝ փորձագետների գերակշռող մասը պնդում է, որ հետհեղափոխական շրջանում պետական շրջանակներից այս թեման սկսեց որոշակիորեն շրջանառվել ինչ-որ պահից սկսած՝ առանձին՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից, եւ փորձագետների մի մասը համոզված են, որ այս պահին սա անձերով պայմանավորված հանգամանք է, ոչ թե կառավարող ուժի ընդհանուր մոտեցում կամ ինստիտուցիոնալ իրողություն:

Ի տարբերություն սոցիալական արդարության՝ բացի առանձին իրադարձություններից, օրինակ՝ բանակում խաղաղ պայմաններում զինձառայողների մահվան եւ ԼԳԲԹ-ի համայնքի ներկայացուցիչների թիրախավորման ու բռնության դեպքերի, կանանց հանդեպ դրսևորվող խտրականության ու ընտանեկան բռնության, մարդու հիմնարար իրավունքների պարագայում, հարցվածների կարծիքով, թեման շրջանառվում է առավել կանոնավորապես, եւ դրանում ակտիվորեն ներգրավված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները՝ ՀԿ-ները, իրավապաշտպան կազմակերպությունները, հատկապես նրանք, որոնք ակտիվորեն համագործակցում են միջազգային կառույցների հետ, որոշ հանրային-քաղաքական ու պետական գործիչներ, անկախությունից ի վեր հատկապես օրվա իշխանությունները, որովհետեւ պարտավորություններ ունեն միջազգային կազմակերպությունների նկատմամբ: Հետաքրքրական կերպով այս թեմաները, ոչ միայն առնչություն ունեն մարդու հիմնարար իրավունքների, այլև սոցիալական արդարության հետ: Սակայն դրանք այդ ոսպնյակով չեն ներկայացվում, հետևաբար որպես սոցիալական արդարության հետ առնչություն ունեցող խնդիրներ հիմնականում չեն ձեւակերպվում:

Խորին հարցազրույցների վերլուծության արդյունքները ցույց տվեցին նաեւ, որ հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարության շուրջ չկան հստակ արտիկուլացվող ըմբռումներ: Որպես այդպիսին՝ բառը ակտիվորեն չի շրջանառվել ո՛չ կրթական, ո՛չ ակադեմիական, ո՛չ քաղաքական շրջանակներում: Փորձագետները գրեթե միաբերան պնդում էին, որ սոցիալական արդարության, մարդու հիմնարար իրավունքների հետ դրա ունեցած սերտ առնչության մասին մեծապես պակասում է ակադեմիական խոսքը, նոր, թարմ խոսքի բացակայությունը, որը կամրապնդեր ու լայն հանրության համար առավել հասկանալի կդարձներ այս քաղաքական արժեքներն ու դրանց միջեւ կապը: Որպես հետևանք՝ սոցիալական արդարության մասին պատկերացումները մնում են աղոտ, լղոզված, վատ ռացիոնալացված ու ռեֆլեքսիայի չենթարկված, հիմնականում էմոցիոնալ առումով ծանրաբեռնված, իսկ իրավունքի մասին գիտելիքը չհամակարգված ու խիստ ֆորմալ:

«Մենք լսել ենք սոցիալական արդարություն, ու մենք ինչ-որ առիթով դրա մասին խոսում ենք: Բայց մենք խորքային չենք ուսումնասիրել, խորքային չենք հասկանում

ինչ է նշանակում սոցիալական արդարություն, և մենք ո՞ր ենք գնում, ինչի՞ ենք ուզում հասնել: Տարբեր առիթներով խոսակցության մեջ այս տերմինը կամ այս հասկացությունը օգտագործում են, բայց ես վստահ չեմ, որ լիարժեքորեն գիտակցված է: Եվ դառնում է մի տեսակ, չգիտեմ՝ կարելի՞ է այլ ձևով ասել, թե՞ չէ, մի տեսակ իմիտացիայի բան է ստանում, իմիտացիա, որ սոցիալական արդարության ենք ձգտում, կամ անում ենք, որպեսզի հաստատենք սոցիալական արդարություն: Բայց ես չեմ կարծում, որ դա խորքային գիտակցված, գիտակցված խոսք է» (հանրային գործիչ):

Խորհրդային անցյալ, ազգայնականություն և հանրային-քաղաքական

խոսույթ:

Խորին հարցազրույցների ընթացքում դիտարկվող քաղաքական արժեքների հարաբերման տեսանկյունից հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից փորձագետներն ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հատկապես նշում էին խորհրդային անցյալի, դրա հանդեպ ունեցած մեր հասարակության շրջանում երկակի վերաբերմունքի և ազգայնականության կամ ավանդական խոսույթի դերակատարությունը: Մասնավորապես, նրանք նշում էին.

- Արդարության հարցի մասին խոսում են հիմնականում նեղ ազգային ծիրում, արդարությունն այնքան էլ սոցիալական, հասարակական հնչեղություն չի ստանում: Կամ էլ քանի որ սոցիալական արդարությանն առնչվող հայաստանյան ամենաակտուալ խնդիրը մնում է աղքատությունը, Երևանի ու մարզերի միջև ահռելի տարբերությունը, ապա սոցիալական արդարությունը որպես կանոն կապում են սոցիալ-տնտեսական բաղադրիչի, փողի, նույնչափ փող վաստակելու հետ՝ անկախ նրանից, թե մարդն ինչ աշխատանքով է զբաղվում, կամ իրացնո՞ւմ է արդյոք իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքները, թե՞ ոչ:
- Սոցիալական արդարությունն ու մարդու հիմնարար իրավունքները որպես արժեքներ և հատկապես դրանց փոխառնչությունը մնում է

հայաստանյան հանրային փոքրամասնության դիրքորոշումը: Այդ փոքրամասնության մեջ հիմնականում ներառված են Արեւմուտքում կրթություն ստացած մարդիկ:

- Քանի որ այս թեման ակադեմիական, ռացիոնալ, քննարկումներից մեծամասամբ դուրս է մնացել, ապա տեղը զբաղեցրել են ռազմահայրենասիրական, ազգայնական թեմաները, միֆականացումներն ու կեղծարքները: Դրանք փակում են մարդու (հիմնարար) իրավունքների եւ սոցիալական արդարության մասին իրական, ռացիոնալ խոսակցությունը հանրային-քաղաքական տիրույթում, ուր կհանդիպադրվեին տարբեր մոտեցումներն ու ըմբռնումները:
- Կառավարող ուժի ներսում նկատելի է խոսույթային իմաստով որոշակի տրոհվածություն քաղաքացիականի ու այսպես կոչված ազգային-պահպանողականի միջեւ, որը երբեմն վերածվում է երկատվածության: Արդյունքում՝ հանրային-քաղաքական խոսույթ քաղաքական-քաղաքացիական իրավունքների ջատագովումը մուտք է գործում հատվածականորեն: Բացի նրանից, որ սոցիալական արդարության թեման խիստ սահմանափակորեն է քննարկվել եւ թեմականացվել, որպես կանոն առանձին ու մասնավոր շրջանակներում, դրա հետ ուղղակի հարաբերման մեջ մարդու հիմնարար իրավունքների հարցը երբեւէ լայնորեն ու լրջորեն չի թեմականացվել հանրային-քաղաքական խոսույթում: Հետհեղափոխական շրջանում սոցիալական արդարության հետ մարդու հիմնարար՝ քաղաքական ու քաղաքացիական իրավունքների հարաբերմանը հանրային-քաղաքական խոսույթում հազվադեպ կարելի է հանդիպել: Այդ մոտեցման կրողներ կան կառավարող ուժի մեջ թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր իշխանության մեջ:

«Եթե ասել, թե հեղափոխությունից հետո իշխող քաղաքական թիւը հենց հստակ սոցիալական արդարության, քաղաքացիական իրավունքի թեմաների փոխկապվածության մասով դիսկուրս է տանում, ասենք օրինակ՝ Ազգային ժողովում, ապա երբ որ լսում ես պատգամավորներին, դու չես լսի այդպիսի բաներ: Կարող է մեկ-

մեկ դուրս պրծնի այս կամ այն տեղից: Այսինքն՝ կարելի է ասել, որ այս գաղափարները կրողներ կան այդ թիմի մեջ, բայց որ իրենք հասարակության մեջ դիսկուրս փոխելու նպատակադրումով տարածում են այդ գաղափարները, շրջանառում են այդ գաղափարները, ապա չկա նման բան» (Ադասի Թադեոսյան, մշակութային մարդաբան):

- Մարդու հիմնարար իրավունքների տեսանկյունից հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում եւ պրակտիկաների մակարդակում ամենաարդիական հարցերից մեկը մնում է այն, թե՛ *ուժն է ծնում իրավունք, թե՛ իրավունքը՝ ուժ*: Մինչհեղափոխական շրջանի քաղաքական դերակատարները գերակշռող իմաստով «ուժն է ծնում իրավունք» համոզմունքի կրողներն էին: Այնինչ հեղափոխությունը ցույց տվեց երկրորդի՝ «իրավունքն է ծնում ուժ»-ի կենսունակությունը: Եվ թեեւ վերջինս խարխլեց առաջին համոզմունքի դիրքերը, այնուամենայնիվ, թե՛ հանրային-քաղաքական խոսույթի, թե՛ պրակտիկաների մակարդակում էական փոփոխություն դեպի երկրորդը՝ «իրավունքն է ծնում ուժ», դրա ամրապնդում, դեռ չի շոշափվում: Հանրային-քաղաքական խոսույթում ավելի լսելի է այն մարդկանց խոսքը, որոնք ելնում են «ուժն է ծնում իրավունք» համոզմունքից: Բոլոր նրանք, ովքեր հակառակ համոզմունքի կրող են կամ կարող են խոսել այդ դիրքից կա՛մ չեն խոսում, կա՛մ քիչ են խոսում:

«Եթե իրավունքով զինված ես, դու շատ ուժեղ ես, և քո դեմ խաղ չկա: Այդ գիտակցված իրավունքը շատ գոռ է ընկալվում մարդկանց կողմից» (քաղաքական գործիչ):

- Որոշ փորձագետներ էլ նշել են, որ հետհեղափոխական շրջանի առաջին տարում մարդու հիմնարար իրավունքների, սոցիալական արդարության մասին քննարկումները ծավալվեցին ամենատարբեր հարթակներում՝ ֆորմալ եւ ոչֆորմալ: Սակայն դրանց արդյունքները չմիավորվեցին, չկոնսոլիդացվեցին ու չնյութականացան: Եվ այս պահին գործուն ֆորմալ ու ոչֆորմալ հարթակների կարիք կա: Ավելին՝ հանրային-քաղաքական

օրակարգը պարբերաբար «լցվում է» կեղծ խնդիրներով եւ արգելակում է իրական խնդիրների ձեւակերպումն ու ռացիոնալ քննարկումները:

- Խորհրդային անցյալի հանդեպ առկա է երկակի վերաբերմունք. հայաստանցիների մի մասը սկզբունքորեն չի ուզում վերադառնալ այդ անցյալ եւ ներկայում դժկամորեն կամ մտավախությամբ է վերաբերվում այդ անցյալը հիշեցնող հայտարարություններին, ծրագրերին, քանի որ այդ անցյալում արմատավորվել է մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտման պրակտիկաները: Միաժամանակ, խորհրդային անցյալով պայմանավորված, մարդիկ, որոնք այդ փուլում, ըստ էության, հպատակներ էին, այսօր էլ՝ որպես քաղաքացիներ պետությունից են ակնկալում կենսապահովման միջոցները: Այդ անցյալը սկզբնավորել ու արմատավորել է մարդու՝ ինքն իր վրա հույս չդնելու զանգվածային դիրքորոշումը:

«Կապված խորհրդային անցյալի հետ՝ կա սոցիալական արդարության ինչ-որ մի քողարկված ընկալում հասարակության մեջ, որը, ըստ երևույթին, գուցե այսպես շատ ակնհայտ, ակնառու մակերեսի վրա չի երևում, բայց որոշակի քաղաքական ֆունկցիա է կատարում հասարակության ներսում, այսինքն՝ կա ինչ-որ մի ակնկալիք, մեծ ակնկալիք պետությունից սոցիալական ծառայությունների առումով» (Վահրամ Սողոմոնյան, քաղաքագետ):

- Որոշ փորձագետների համոզմամբ վերջինս հանգեցրել է «պետություն-քաղաքացի» հարաբերությունների մասին պատկերացումների աղճատման եւ անընդունելի սոցիալական ֆենոմենների ի հայտ գալուն, օրինակ՝ այնպիսին, ինչպիսին կոռուպցիան է: Եվ թեեւ կոռուպցիայի դեմ պայքարը կառավարող ուժը չի շեշտում որպես արդարությանն ուղղված քայլ, այնուամենայնիվ հանրույթը այն ավելի շուտ հենց իբրեւ արդարության տանող գործողությունն էլ ընկալում է:

«Մենք ժառանգեցինք զզվանք Սովետի նկատմամբ, բայց կախվածություն պետությունից արժեքային համակարգում, անեմի՝ գործելու, իշխելու, քաղաքացի լինելու անկարողություն և սուտ գաղափարախոսություն՝ ի դեմս ազգայնականության՝

միավորված շատ ռեալ պատերազմի հետ» (Գեորգ Տեր-Գաբրիելյան, արձակագիր, հրապարակախոս):

Իրավունքի լեզուն , իրավունք եւ պատասխանատվություն:

Այս համատեքստում խորին հարցազրույցի որոշ մասնակիցներ հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթի ծիրում սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերման տեսանկյունից կարելոքում էին քաղաքացիների իրավունքի սահմանների, իրավունքի եւ պատասխանատվության փոխհարաբերության վերաբերող հարցերը: Մասնավորապես որպես իրական խնդիր է դիտարկվում մարդկանց կողմից իրենց իրավունքի մասին խոսելու, բայց դիմացինի իրավունքը եւ հանրույթին նկատի չառնելու հանգամանքը: Պետությունը կամ ընկալվում է ծնող, որից պետք է սպասել ամեն ինչ, կամ՝ երեխա, որին ամեն ինչ պիտի տալ ու ոչինչ չսպասել: Այն չի ընկալվում որպես գործընկեր:

«Տարիներ շարունակ մանիպուլացվել է, երբ որ պատասխանատվության մասին է խոսվել, երբ որ քաղաքացուց խլված է եղել իր իրավունքը իրացնելու հնարավորությունները, և իրենք ճնշված են եղել: Ճնշված մարդուն անընդհատ պատասխանատվության են կանչել: Հիմա իրավիճակն ամբողջությամբ ուրիշ է, բայց քանի որ լեզուն չի փոխվել՝ հիմնական, և ընդդիմանալու լեզուն նաև չի փոխվել: Ոչ միայն, այդ շատ կարևոր հարց է, որ այդ լեզուն չի փոխվել, հիմա լեզվիտիմ և լեզալ իշխանության հետ հնարավոր չէ նույն լեզվով բանավիճել, ինչ որ ոչ լեզվիտիմ և ոչ լեզալ իշխանության հետ: Բայց մեր լեզուն չի փոխվել, մենք էլի նույն տոնայնությամբ, նույն տեմբրով ու նույն տրամաբանությամբ բանավեճ ենք անում լեզվիտիմ և լեզալ իշխանության հետ: Հիմա այս պահին, այս իրավիճակում, երբ որ կեղեքող չկա, իրավունքի խլող չկա և բացի պետության լեզվիտիմ գործիքակազմից՝ ուրիշ բան չկա քեզ ճնշող, պատասխանատվության մասին խոսելն ավելի լեզվիտիմ է, երբ որ դու իրավունքից ես խոսում: Բայց, քանի որ լեզուն չի փոխվել, երբ որ դու սրա մասին խոսում ես, ասում են՝ ա՛հ, տես որ նույն բանն է ասում, ինչ որ ժամանակին մանիպուլացնում էին: Բայց այդ նույն բանը չես ասում, որովհետև չկա խլված իրավունք և միայն պատասխանատվություն, այլ նաև իրավունքն է տրված, որը նաև

ունի իր պատասխանատվությունը: Այստեղ մեծ խնդիր կա, չգիտեմ, լեզվի խնդիր կա՞՞
ո՞ւր: Հիմա, երբ քննադատողները լեզուն չեն մշակել, և նաև իշխանության մեջ
գտնվողների մեծամասնությունը լեզուն չի մշակել, [թե] ո՞նց հարաբերվի» (պետական
բարձրաստիճան պաշտոնյա):

Խորին հարցազրույցների ընթացքում հանրային-քաղաքական խոսույթում
գործադրվող լեզվի, այսինքն՝ հանրային-քաղաքական հնչեղություն ստացած
խնդիրների, հաղորդակցվող արժեքների մասին խոսելու բառերի,
հասկացությունների, ըմբռնումների ու կերպերի, հարցը ի հայտ եկավ հիմնական
խնդիրների շարքում: Հատկապես այդպիսի լեզվի խնդիրը, ըստ հարցվողների, ցցուն է,
երբ խոսք է գնում մարդու (հիմնարար) իրավունքների լեզվի մասին: Ըստ
արդյունքների՝ հանրության լայն շերտերում իրավունքը որպես արժեք դեռ բավարար
չափով եւ խորապես հաղորդակցված չէ: Թեւ իրավունքի ու նրա մյուս կողմ
հանդիսացող պարտականության մասին գիտելիքն ու փորձառությունը հայտնվել են
մեզանում, բայց դրանք համակարգված չեն: Մարդու հիմնարար իրավունքների որպես
հարաբերությունները կարգավորող գործիքի ներդնումը բախվում է առանցքային
խնդրի՝ պատշաճ պարզաբանված չէ, թե ինչու պետք է ունենալ իրավունք:

«Բոլորս ունենք իրավունք: Բայց թե այդ ի՞նչ իրավունք է, ինչի՞ մենք ունենք այդ
իրավունքը: Ինչի՞ պետք է մենք ունենանք կամ՝ ինչի՞ ուրիշը պետք է ունենա: Դրանց
ըմբռնումը, ինչպես հասկանում եմ, տոտալ բացակայում է» (Համլետ Մելքումյան,
մշակութային մարդաբան):

Մյուս կողմից՝ մարդկանց շրջանում իրավունքին տեղ լինելու գիտակցությունը
դեռ լիովին չկա: Մարդիկ իրավունքից չեն խոսում, այլ՝ արդարությունից ու
անարդարությունից, արդար չէ, ճիշտ չէ, լավ չէ՝ ավելի շուտ այս ըմբռնումների
տեսանկյունից: Այս խնդիրը շեշտադրում էին մասնավորապես այն հարցվողները,
որոնք ի պաշտոնե հաճախ հանրային խոսք ասելու եւ տարբեր հանրային խմբերի ու
շերտերի հետ սրությամբ ընկալվող խնդիրներով հաղորդակցվելու
անհրաժեշտություն ունեին: Հենց իրենք էին նշում, որ երբ մարդու իրավունքների
լեզվով խոսելիս մեծամասամբ մնում են չհասկացված:

«Ես փորձում եմ հանրային խոսքի մասով հնարավորինս մարդու «մաշկին» կպած խոսք ասել, որ կարիք չունենամ միջնորդ թարգմանչի, որը ուրիշ ձև կթարգմանի իմ խոսքը, որովհետև դա միշտ պրոբլեմ է: Բայց եթե հանկարծ ես այս դիրքերից խոսեմ, ես վստահ չեմ, որ այլմոլորակայինի տպավորություն չեմ թողնի» (Բարձրաստիճան պետական պաշտոնյա):

Միաժամանակ հարցվածները, նշելով մեր հանրային-քաղաքական խոսույթում խնդրո առարկայի շուրջ բավարար ու հիմնավոր կերպով ռեֆլեքսիայի պակասը, անգամ բացակայությունը, փաստում էին հայաստանյան հանրույթի պատմական փորձառության եւ այդ փորձառությունը վերլուծող ու նկարագրող լեզվի միջեւ խզումն ու անհամապատասխանությունը, որոշ դեպքերում՝ այդ լեզվի բացակայությունը:

«Ինձ ապշեցնում է, որ մեր հանրությունը, մարդու իրավունք ասվածն ընկալում է որպես դրսից ներմուծված ինչ-որ բան, այն դեպքում, երբ որ մենք անցել ենք ցեղասպանության մեջով: Ի՞նչ է ցեղասպանությունը, եթե ոչ մարդու իրավունքի խախտում, մարդու կյանքի, սեփականության իրավունքի խախտում, ու հետաքրքիրն այն է, որ այդ մարդու հիմնարար իրավունքների, մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան, այդ փաստաթղթերն ստեղծվել են մեր փորձի վրա, մեր պատմության վրա, այսինքն՝ մարդու խիղճը վրդովեցնող այն իրադարձությունները, որ անցած դարում եղել են մեզ հետ, նաև ուրիշ ժողովուրդների, հիմք են եղել, փորձ են եղել, որ ստեղծվեն այդ փաստաթղթերը: Հիմա այդ փաստաթղթերը կան և շատ երկրների օրակարգում են, բայց մեզ մոտ չկա ընկալումը, որ դա մեր փորձն է, ու դա այն է, ինչ մեզ հետ տեղի է ունեցել, ու դրա համար մարդու իրավունք ասվածը Հայաստանում մի տեսակ մարդուց օտարված է» (պետական բարձրաստիճան պաշտոնյա):

Այս առումով բավական ուշագրավ է փորձագետներից մեկի արձագանքը, որը եւս բարձրացնելով հանրային-քաղաքական խոսույթում գործադրվող լեզվի խնդիրը, փաստելով անգամ ակադեմիական շրջանակում լեզվական փոխըմբռնման բացակայությունը՝ պնդում է.

«Այնպիսի գեղեցիկ բառերի օգտագործումը, որպիսիք են «մարդու իրավունքները», «շուկայական տնտեսությունը», «դեմոկրատական ընտրությունները» եւ այլն, մեզանում շատ հաճախ ոչինչ չեն նշանակում, քանի որ օգտագործվում են

իմիտացիոն ձեռով, բոլորովին այլ մի իրականություն քողարկելու նպատակով: Հետեւաբար քվազի-արեւմտյան դիսկուրսի կիրառության հաճախականությունը չի խոսում հասարակության մեջ նրա դեմոտաների արմատավորման մասին: Հայաստանյան իրականությունը շատ բարդ է, մասամբ խառնիճաղանձ, եւ խնդիրն, իհարկէ, այն չէ, որպէսզի մենք այդ կարեւորագույն խնդիրներն անտեսենք, այլ այն, որպէսզի այդ բաների մասին խոսենք այնպիսի մի լեզվով, որն իսկապէս պարզ կդարձնի, թէ որտե՞ղ ենք մենք գտնվում, ի՞նչ իրական հարաբերությունների մեջ ենք ապրում, եւ ինչպե՞ս է պետք կերպափոխել այդ հարաբերությունները, որպէսզի իրականում կարողանանք ապահովել մի կողմից սոցիալական արդարությունը, մյուս կողմից էլ՝ մարդու իրավունքների պաշտպանությունը հայաստանյան հասարակության պայմաններում» (Աշոտ Ռսկանյան, փիլիսոփա, ՀՀՀԿ նախագահ):

Խոսույթների ու պրակտիկաների փոխհարաբերության չափումը:

Վկայելով, որ ինտելեկտուալ խոսույթները հայաստանյան հանրային-քաղաքական տիրույթում թույլ են եւ «ստեղծվել է կցկտուր վիճակ, որ ով որ ունենում է հնարավորություն այս կամ այն հանրային հարթակում եզակի, կտրտված խոսք արտահայտելու, ինքն այդ խոսքն ասում է, այդ խոսքը փոքր շրջան է անում ու պրծնում է» (Ադասի Թադեւոսյան) եւ նկատելի է խոսքի համընդհանուր դեգրադացիա՝ խորին հարցազրույցի մասնակիցները նաեւ նկատում էին, որ սա համակցված է անձի անսխալականության համոզմունքի լայն տարածվածության հետ: Վերջին դեպքում ենթադրվում է, որ մարդը կա՛մ սուտ է խոսում, կա՛մ ճշմարտությունն ասում: Բայց նա երբեք չի սխալվում, իսկ նման պայմաններում լուրջ դժվարություններ են ծագում բուն հանրային-քաղաքական խոսույթի լինելության եւ գործառման համար: Դրան հավելվում է հանրության բեւեռացվածությունը, որը կաղապարված է «կա՛մ այո, կա՛մ ոչ կատեգորիկ» տարբաժանման ընկալումներում: Խորհրդային անցյալից եկող «եթէ դու մեզ հետ չես, վտարանդի ես» դիրքորոշումը դեռեւս կենսունակ է: Այլընտրանքային տեսակետը հանրային խոսույթում հնարավոր չէ առաջ տանել, այլընտրանքային խոսքն ասողն անմիջապէս մարզինալացվում է: Որպէս հետեւանք՝ խնդիր է առաջանում մարդու որոշ հիմնարար իրավունքների իրացման հետ:

«Բեւեռացված հանրության մեջ արանքում բան չկա: Դու չես կարող ուրիշ կարծիք ունենալ: Կա՛մ այո է, կամ՝ ո՛չ: Կա՛մ սրիկա ես, կամ՝ հերոս: Մեզ հրամցնում են այդ խոսքի ազատությունն ու ընտրելու ազատությունը: Դա կեղծ է, որովհետեւ երբ որ ինձ ասում են՝ եթե դու այո չես ասում, կապ չունի՝ դու ինչ փաստարկներով այո չես ասում, ուրեմն՝ դու նախկիններից ես, դա շանտաժ է, դա խոսքի ազատություն չէ և ազատ կամարտահայտություն չէ: Այսինքն՝ խեղաթյուրել այդպես խոսքի ազատությունը, չի կարելի» (քաղաքական գործիչ):

Մատնանշելով նաև ընդհանրապես մարդու իրավունքի որպես արժեքի կիրառումը մանիպուլյատիվ նպատակներով տարբեր կլանների միջև պայքարում, ինչն արժեզրկում է այն, խորին հարցազրույցի մասնակիցները նկատում էին նաև հանրային-քաղաքական խոսույթի եւ պրակտիկաների միջև հետեւյալ ուշագրավ հարաբերությունները.

- Կան պրակտիկաներ՝ ծրագրեր, քաղաքականություններ, գործողություններ, որոնք իրականացվում են, օրինակ՝ ձախականության կամ նույն վերոհիշյալ ազատական-ժողովրդավարության ծիրում, սակայն խոսքի մակարդակում դրանք ձեւակերպված չեն կամ հստակ չեն ձեւակերպված:
- Երբ խոսքի մակարդակում հայտարարվում է որեւէ արժեքի, օրինակ՝ «հպարտ քաղաքացու», այսինքն՝ հիմնարար իրավունքների տեր մարդու արժեքը, բայց նրա մեջ լուրջ բովանդակություն չի դրվում կամ մակերեսային է ընկալվում, հետո էլ այն ոչ-խոսքային պրակտիկաների մակարդակում բավարար չափով ամրագրված չէ, ապա անխուսափելիորեն հանգում են դրանց արժեզրկման: Մասնավորապես հեղափոխությունից հետո բավարար չափով զարկ չի տրվել քաղաքացիական կառույցներին:

«Այս մակերեսային պատկերացումը հպարտը, հպարտությունը և արժանապատիվը, արժանապատվությունը իրարից չտարբերելու հանգեցրել է նրան, որ իրական արժեքը, հեղափոխությամբ իրացված, հաստատված, փնտրվում է հռետորության մակարդակի վրա: Եվ այդ հռետորությունը շահարկվում է, շահագործվում է, որը կարող է փաստ բերել արդեն իսկ այդ ձեռքբերմանը, փաստել

այդ ձեռքբերմանը, նեգատիվ, ժխտական լուսավորում ստեղծել այդ ձեռքբերման վրա, գոնե դիսկուրսի մակարդակում» (հանրային գործիչ):

- Միաժամանակ պրակտիկաների մակարդակում քաղաքացիականությունը հեղափոխությամբ լավ յուրացված է, եւ ընթանում են խորքային փոփոխություններ, որոնք, սակայն, հանրային-քաղաքական խոսույթում չեն ձեւակերպվել: Իր հերթին պետական համակարգը դուրս է մնացել այդ փոփոխություններից եւ չի կարողանում դրանց արձագանքել:
- Հանրային-քաղաքական խոսույթի մասնատվածությունն ու հատվածականությունը, «կղզյակներով» խոսակցությունների ծավալումը լուրջ խոչընդոտ է հեղափոխական արժեքների հաղորդակցման եւ ամրապնդման համար:

Այսպիսով, վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

- Անկախությունից ի վեր հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում մարդու հիմնարար իրավունքների խոսույթը եւ սոցիալական արդարության խոսույթը ծավալվել են գլխավորապես միմյանցից անջատ: Առաջինն առավել զարգացած է, քան՝ երկրորդը:
- Սոցիալական արդարության մասին պատկերացումները մնում են աղոտ, լղոզված, վատ ռացիոնալացված ու ռեֆլեքսիայի չենթարկված, հիմնականում էմոցիոնալ առումով ծանրաբեռնված, իսկ իրավունքի մասին գիտելիքը չհամակարգված ու խիստ ֆորմալ, որի հետեւանքով այն մասամբ կորցրել իր ազդեցիկությունը:
- Սոցիալական արդարության թեման ժամանակ առ ժամանակ հանրային-քաղաքական խոսույթ բերում են առանձին իրադարձություններ: Սակայն դրա վերաբերյալ չկան հստակ արտիկուլացվող ըմբռումներ:
- Մարդու հիմնարար իրավունքների պարագայում թեման շրջանառվում է առավել կանոնավորապես, եւ դրանում ակտիվորեն ներգրավված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, որոշ

հանրային-քաղաքական ու պետական գործիչներ, անկախությունից ի վեր հատկապես օրվա իշխանությունները:

- Արդարության հարցի մասին խոսում են հիմնականում կամ նեղ ազգային ծիրում, կամ՝ սոցիալ-տնտեսական բաղադրիչի, փողի, նույնչափ փող վաստակելու առնչությամբ:
- Սոցիալական արդարությունն ու մարդու հիմնարար իրավունքները որպես արժեքներ եւ հատկապես դրանց փոխառնչությունը մնում է հայաստանյան հանրույթի փոքրամասնության դիրքորոշումը:
- Քանի որ այս թեման ակադեմիական, ռացիոնալ, քննարկումներից մեծամասամբ դուրս է մնացել, ապա տեղը զբաղեցրել են ռազմահայրենասիրական, ազգայնական թեմաները, միֆականացումներն ու կեղծարքները:
- Չնայած հեղափոխական իրադարձությանը, «իրավունքն է ծնում ուժ» համոզումները շարունակում է կենսունակ լինել:
- Խորհրդային անցյալի հանդեպ առկա երկակի վերաբերմունքի ֆոնին հասարակության շրջանում սոցիալական ծառայությունների առումով պետությունից մեծ ակնկալիքներ կան:
- Հանրային-քաղաքական խոսույթում գործադրվող լեզվի հարցը հիմնական խնդիրներից մեկն է եւ սա հատկապես ցցուն է, երբ խոսք է գնում մարդու (հիմնարար) իրավունքների լեզվի մասին: Հանրության լայն շերտերում իրավունքը որպես արժեք դեռ բավարար չափով եւ խորապես հաղորդակցված չէ:
- Հայաստանյան հանրության լայն շերտերը իրավունքից չեն խոսում, այլ՝ արդարությունից ու անարդարությունից:
- Ինտելեկտուալ խոսույթների տկարության պայմաններում լուրջ դժվարություններ կան բուն հանրային-քաղաքական խոսույթի լինելության եւ գործառման համար: Հայաստանյան հանրույթը բեւեռացված է, ռացիոնալ բանավեճը՝ գրեթե անհնար, այլընտրանքային տեսակետ ներկայացնողն արագ մարզինալացվում է:

- Հանրային-քաղաքական խոսույթի մասնատվածությունն ու հատվածականությունը, «կղզյակներով» խոսակցությունների ծավալումը լուրջ խոչընդոտ է հեղափոխական արժեքների հաղորդակցման եւ ամրապնդման համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել.

- ԽՍՀՄ փլուզումից եւ Հայաստանի անկախացումից ի վեր հայտարարված խորքային փոփոխությունների օրակարգի գաղափարաբանական շրջանակը, ըստ էության, ազատական-ժողովրդավարական է:
- Ջ. Ռոլսի ուսմունքի անկյան տակ՝ ինքնին ազատական-ժողովրդավարական շրջանակում մարդու հիմնարար իրավունքները հարաբերվում են սոցիալական արդարությանն ուղղակիորեն՝ որպես նրա մաս: Այսինքն՝ մարդու հիմնարար իրավունքների իրացումը մասնակիորեն արդեն իսկ վկայություն է, որ գործող հանրային կանոնները կամ հասարակական հաստատությունները արդար են:
- Խարխսված լինելով յուրաքանչյուր մարդու արժանապատվության, նրա եզակիության եւ ազդեցիկ գործորդ լինելու գաղափարների վրա՝ այն իր արտացոլումն է գտել գործող ՀՀ Սահմանադրությունում, պաշտոնական փաստաթղթերում՝ կառավարության, կուսակցական ծրագրերում եւ ոլորտային ռազմավարություններում, հրապարակային ելույթներում ու հարցազրույցներում:
- Հանրային-քաղաքական խոսույթի առանցքային դերակատարները թե՛ պաշտոնական, թե՛ քաղաքացիական հատվածում մատնանշում են մարդու հիմնարար իրավունքների եւ (սոցիալական) արդարության միջեւ կապը: Ընդ որում՝ այս պահին միտումը դեպի մարդու հիմնարար իրավունքների եւ սոցիալական արդարության միջեւ կառուցվածքային, ուղիղ կապի մասին է: Եվ, ըստ էության, առնվազն պաշտոնական խոսույթի մակարդակում պահպանվում է խորքային բարեփոխումների օրակարգի ազատական-ժողովրդավարական շրջանակը:
- Բայց սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների միջեւ խորքային կապի կարելորդությունը եւ գիտակցումը հանրային-քաղաքական խոսույթում թուլանում է մի շարք պատճառներով. ա)

«սոցիալական արդարության» եւ «մարդու (հիմնարար) իրավունքների» խոսույթներն անկախությունից ի վեր ծավալվել են առանձին-առանձին: Վերջինն առավել լավ է զարգացած, քան՝ առաջինը, ուստի տարբեր տեսակետներից սոցիալական արդարության գաղափարը, ըստ էության, քննարկված ու ըմբռնված չէ, ք) «արդարություն» բառը բովանդակապես լրոգված է եւ ոչ հստակ: Դրան ուղեկցող ձեւակերպումները երբեմն խրթին են: Որոշ դեպքերում պարզ չէ այլ գաղափարների ու սկզբունքների հետ ունեցած բովանդակային հարաբերությունները, գ) այն խիստ սակավ է գործածվում պաշտոնական փաստաթղթերում եւ ազատական հայացքներ կրողների շրջանում, դ) արդարությանը վերաբերող հարցերի մասին խոսում են նեղ ազգային ծիրում, ե) խորհրդային անցյալի ազդեցությամբ սոցիալական արդարության քողարկված ընկալում կա, որը ենթադրում է քաղաքացիների շրջանում պետության հանդեպ մեծ ակնկալիքներ:

- Միաժամանակ տարիներ շարունակ, եւ այս միտումը դեռ շարունակվում է, մարդու (հիմնարար) իրավունքների գաղափարը պաշտոնական փաստաթղթերում ու հրապարակային տեքստերում ֆորմալ տեսանկյունից գերգործածված է ու շահարկված: Այնինչ հայաստանյան հանրույթի շրջանում մարդու իրավունքի գաղափարը բովանդակային առումով լավ հասկացված չէ: Շարքային քաղաքացին, թեւ քաղաքական-քաղաքացիական պայքարի պրակտիկաները լավ է յուրացրել, այնուամենայնիվ, մարդու իրավունքի գաղափարը դժվարությամբ է կապում իր կենդանի փորձառության հետ: Իրավունքը որպես արժեք բավարար չափով հաղորդակցված չէ, քանի որ հաճախ պարզ չէ, թե այն ինչի համար է: Հանրային խոսքը լայնորեն ընկալելի չէ, եթե իրականանում է իրավունքի լեզվի միջոցով, այնինչ պաշտոնական փաստաթղթերի լեզուն իրավունքի լեզուն է: Իրավունք որպես ուժ չի ընկալվում: Հայաստանյան հանրույթն ավելի շուտ որպես արժեք ընկալում է արդարը: Որպես հետեւանք՝ հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթում ակնհայտորեն անհամաչափ են հողավորված

սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների գաղափարները:

- Դիտարկվող ժամանակաշրջանում հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարության գաղափարի «ստվերման» պայմաններում նրա հետ հարաբերման մեջ անբացահայտ կերպով ավելի շատ ի հայտ են եկել մարդու այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են կյանքի, ընտրական, հավաքների, կարծիքի արտահայտման, օրենքի առջև բոլորի հավասարության, գործի արդար քննության իրավունքները, խոշտանգման ու խտրականության արգելքները:
- Հետհեղափոխական Հայաստանի հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարությանը մարդու հիմնարար իրավունքների հարաբերումն ի հայտ է գալիս անցյալին եւ ապագային անդրադառնալիս: Առաջին դեպքում խոսքն ավելի շուտ (սոցիալական) անարդարության եւ մարդու հիմնարար իրավունքների խախտման ու ոտնահարման միջև հարաբերման մասին է, իսկ ապագան՝ ներկայանում է որպես արդարության հաստատման եւ իրավունքի երաշխավորման իրականություն:
- Միաժամանակ ազատական ժողովրդավարական ծիրում ձեւակերպված սոցիալական արդարության հայեցակարգը, ուր սոցիալական արդարության ու մարդու հիմնարար իրավունքների միջև ուղղակի, կառուցվածքային կապ ու հարաբերություն կա, հայաստանյան հանրային պատկերացումներում մասնատված ու ցրված է: Ազատական-ժողովրդավարական գաղափարաբանական շրջանակը որոշակիորեն բեկված է, ավելի հաճախ՝ ազգայնական գաղափարներով:
- Այս պահին հայաստանյան հանրային-քաղաքական խոսույթն ավելի շուտ վտանգված է, քան հնարավորություն ունի բնականոն գործառելու: Այն իր հերթին մասնատված է փոքր «կղզյակների», հանրային հնչեղություն են ստանում կեղծ խնդիրները, այն «լցվում է» միֆականացումներով եւ կեղծարքներով: Իրական խնդիրները զրկվում

են ձեռակերպվելու եւ ռացիոնալ քննարկման ենթարկվելու հնարավորությունից:

- Ռացիոնալ բանավեճերի ծավալմանը մեծապես խանգարում են հայաստանյան հանրույթի բեւեռվածությունը, այլընտրանքային տեսակետների մարգինալացումը, բանավեճի մասնակիցների մեծամասնության շրջանում սեփական սխալակախության ընդունման բացակայությունը:

Հաշվի առնելով վերոհիշյալ եզրակացությունները՝ տեղին են հետեւյալ **առաջարկությունները.**

- Դրամաշնորհ տրամադրող պետական եւ ոչ պետական կազմակերպությունները, այդ թվում՝ ոչ տեղական կազմակերպությունները առավել շատ ուշադրություն պիտի դարձնեն սոցիալական արդարության հիմնախնդիրների ուսումնասիրություններին առավել լայն համատեքստում, բազմակողմանի, գաղափարական տարբեր տեսանկյուններից:
- Սոցիալական արդարության մասին սոցիալ-տնտեսական ծիրում աղքատության վերաբերյալ սահմանափակ պատկերացումներն ընդլայնելով՝ հաշվի առնել աղքատության բազմաչափությունը, դրա վրա մարդու հիմնարար իրավունքների իրացման հսկայական ազդեցությունը:
- Պետական տարբեր գերատեսչություններում քաղաքականություն մշակողներն ու իրականացնողները ռազմավարություններ, գործողությունների ծրագրեր մշակելիս պետք է հստակեցնեն եւ սինխրոնացնեն առանցքային սկզբունքներն ու դրանց ըմբռնումները՝ ոլորտային քաղաքականությունների իրականացման փուլում հակասություններից ու անարդյունավետությունից խուսափելու համար:
- Հանրային-քաղաքական խոսույթում սոցիալական արդարության եւ հատկապես մարդու հիմնարար իրավունքի արժեքները հաղորդակցել հանրամատչելի լեզվով ընթացիկ խնդիրների օրինակների հիման վրա:
- Իրավունքի գաղափարն լայնորեն ընկալելի դարձնելու եւ քաղաքացիների կենդանի փորձառության հետ կապելու համար զարկ տալ գեղարվեստական

ձեւերով (գրականության, անիմացիայի, ժամանակակից տեսաձայնային միջոցներով) այդ արժեքների հաղորդակցմանը:

- Հանրային-քաղաքական խոսույթի վրա առավել ազդեցիկ գործիչներին առաջարկել ՀՀ Սահմանադրության՝ մարդու հիմնարար իրավունքներին ու ազատությունների վերաբերող հոդվածներից յուրաքանչյուրի մասին առանձին-առանձին հանդես գալ հանրամատչելի հանրային խոսքով մեծ լսարան ապահովող մեդիայում:

Այս առաջարկություններին զուգահեռ անհրաժեշտ է.

- Հատկապես ազատական կողմնորոշման քաղաքական-հանրային գործիչներին մարդու հիմնարար իրավունքների մասին խոսելիս կապել այն սոցիալական արդարության հետ եւ այդ կապակցության մեջ ավելացնել «սոցիալական արդարություն» բառը կիրառելու հաճախականությունը:
- Առավել հստակ ու հանրամատչելի ձեւակերպել թե՛ սոցիալական արդարության, թե՛ մարդու հիմնարար իրավունքների մասին պատկերացումները պաշտոնական փաստաթղթերում, կուսակցության ծրագրերում եւ հանրային ելույթներում կամ հարցազրույցներում:
- «Մարդու հիմնարար իրավունքները» թեմայով պատրաստել կրթական-լուսավորչական եւ հանրամատչելի նյութեր (նոր մեդիա միջոցներով ձեռնարկներ, տեսադասախոսություններ, ցուցահանդեսներ եւ այլն)՝ հաղորդակցելով այդ արժեքը կրելու կարեւորությունն ու նպատակը տեղական համատեքստի սահմաններում:
- Սոցիալական արդարության տարբեր (աջապաշտական, ձախապաշտական, ֆեմինիստական, համայնքապաշտական) հղացքների ու հայեցակարգերի, դրանց տարբեր հղացական զուգորդումների վերաբերյալ կազմակերպել հանրամատչելի տեսադասախոսություններ, քննարկումներ, ուսումնական նյութեր, իրականացնել համապատասխան ակադեմիական գրականության թարգմանություններ: Դրանք հասանելի դարձնել կրթական հաստատությունների դասավանդողներին ու ուսումնառողներին:

- Վերանայել ու վերաձեւակերպել կամ հիմնել ու խթանել քննարկումների նոր հարթակներ, որոնք հետեւողականորեն եւ տեւական ժամանակ կանդրադառնան սոցիալական արդարության եւ մարդու հիմնարար իրավունքների արժեքներին նորարարական մոտեցմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման
ռազմավարության նախագիծ», առցանց՝ <https://www.e-draft.am/projects/1928/about>,
այց՝ 25.01.2020:

Բայադյան, Հրաչ, *Երևակայելով անցյալը. խորհրդահայ արդիականության
պատումներ*: Երևան: Հեղինակային հրատ, 2020:

Թադեոսյան, Ադասի, Անհավասարության դիսկուրսը եւ աղքատության
հաղթահարման հիմնախնդիրը Հայաստանում, *ՀԱՅԱՍՏԱՆ 2018.
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ*: 154–163, Եր.: Հումանիտար
հետազոտություններ հայկական կենտրոն, 2019:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր», *Հետք*, առցանց՝
<https://hetq.am/static/content/pdf/My%20step.pdf>, այց՝ 22.01.2020:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագիր», առցանց՝
<https://www.brightarmenia.am/am/54/1543/lusavor-hayastan-kusakcutyan-azh-nakhyntrakan-tsragir.htm>, այց՝ 22.01.2020:

Խաչատրյան, Նարինե, Մանուսյան, Սոնա, Սերոբյան, Աստղիկ, Գրիգորյան, Նվարդ,
եւ Հակոբջանյան, Աննա, *Մշակույթ, Արժեքներ, Համոզմունքներ. Վարքի
կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում*: Եր.: Հեղ. Հրատ., 2014:

«Կարմիր թել» Լենա Նազարյանի հետ, *Մեղիամաքս*, 11 Մարտի, 2020, առցանց՝
<https://www.youtube.com/watch?v=b6nbhPTC26M>, այց՝ 12.03.2020:

«Կառավարության 2019–2023 ծրագիր», առցանց՝
<https://www.gov.am/files/docs/3133.pdf>, այց՝ 19.01.2020:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագիր, 2013», առցանց՝
http://www.anc.am/?page_id=1024, այց՝ 03.02.2020:

«Հայոց համազգային շարժում» կուսակցության ծրագիր, 2007», առցանց՝
http://www.anm.am/index.php?option=com_content&view=article&id=81&Itemid=67, այց՝
03.02.2020:

«Հարկավոր է անվանական մատնանշել բոլոր այդ հանցագործությունների գլխավոր
դերակատարներին. Լևոն Բարսեղյանը՝ վարչապետի հրապարակած հոչակագրի

մասին», *factor.am*, 11 Մարտի, 2020, այց՝ 13.03. 2020, առցանց՝
<https://factor.am/228866.html>:

«Հեղափոխությունն ստեղծել է մի միջավայր, որտեղ մարդը բարձրագույն արժեք է, և նրա իրավունքների պաշտպանությունը կառավարության առաջնային խնդիրն է».
վարչապետը մասնակցել է ՄԻՊ հաստատության գործունեության 15-ամյակի համաժողովին, *Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ*, 26 Նոյեմբերի, 2019, առցանց՝ <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/11/26/Nikol-Pashinyan-Ombuds-15/>, այց՝ 02.02.2020:

ՀՀ Սահմանադրություն, առցանց՝ <https://www.president.am/hy/constitution-2015/>, այց՝ 23.02.2020:

«ՀՀ վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանի ելույթը Ազգային ժողովում», *Առավոտ*, 1 Մայիսի, 2018, առցանց՝ <https://www.aravot.am/2018/05/01/954167/>, այց՝ 19.01.2020:

«ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը Մարտի 1-ի կապակցությամբ», *Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ*, առցանց՝
<https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/03/01/Nikol-Pashinyan-Message/>, այց՝ 19.01. 2020:

«Հայաստանի Հանրապետական կուսակցության ծրագիր», առցանց՝
<http://hhk.am/hy/program/>, այց՝ 03.02.2020:

«ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիր, 2013», առցանց՝
[http://www.hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20\(1\).pdf](http://www.hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20(1).pdf), այց՝ 03.02.2020:

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», *ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա*, առցանց՝ <https://www.un.am/up/library/UDHR-booklet-Armenian-version.pdf>, այց՝ 19.01.2020:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա», առցանց՝ https://www.gov.am/u_files/file/kron/2%20EuoroConvent-Arm.pdf, այց՝ 19.01.2020:

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն», առցանց՝ <http://e-rights.am/>, այց՝ 19.01.2020:

Սկրտիչյան, Արթուր, Վերմիշյան, Հարություն, և Բալասանյան, Սոնա, *Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդների շրջանում. Հայաստան 2016*: Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայկական մասնաճյուղ, 2016:

«Նիկոլ Փաշինյանի ելույթը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 5-րդ համաժողովում», *Civilnet*, 17 Հունիսի, 2019, առցանց՝
<https://www.civilnet.am/news/2019/06/17/%C2%AB%D5%94%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%C2%BB-%D5%AF%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%A1%D5%B2%D5%A1%D6%83%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8/362872>, այց՝ 10.02.2020:

Միմոնյան, Անահիտ, Սմբատյան, Հայկ, Թադևոսյան, Միշա, Էլ Մանուկյան, Սոֆյա, «*Ի՞նչ է արդարությունը. արդարության ընկալումները հայաստանցիների շրջանում*»: «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ / «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամ, 2018 թ.:

Միմոնյան, Անահիտ, Էլ Հակոբյան, Գոռ, «*Աղքատություն և մարդու իրավունքներ. ինչպե՞ս ձևավորել իրավունքահենք պետական աղքատության հաղթահարման քաղաքականություն Հայաստանում*»: «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ, 2019 թ.:

«Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանում», 26 Սեպտեմբերի, 2019, *Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ*, 26 Սեպտեմբերի, 2019, առցանց՝
<https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/09/26/Nikol-Pashinyan-74th-session-of-UN-General-Assembly/>, այց՝ 19.01.2020:

«Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ուղերձով դիմել է ժողովրդին», *Հայաստանի Հանրապետության Վարչապետի կայքէջ*, 24 Մարտի, առցանց՝
<https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2020/03/24/Nikol-Pashinyan-Speech/>, այց՝ 25.03.2020:

«Փաշինյանը հռչակագրի նախագիծ է հրապարակում», *Ազատություն*, 11 Մարտի, 2020, այց՝ 13.03.2020, առցանց՝ <https://www.azatutyun.am/a/30481268.html>:

«Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր», առցանց՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500>, այց՝ 18.01.2020:

«ՔՈ նախընտրական ծրագիր», առցանց՝ <http://www.sdp.am/%D6%84%D5%B8-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/>, այց՝ 22.01.2020:

- Beitz, Charles. *The Idea of Human Rights*. Oxford: Oxford University Press, 2009.
- Chadwick, Andrew. "Studying Political Ideas: A Public Political Discourse Approach." *Political Studies*, Vol. 48, Issue 2 (May: 2000): 283–301.
- Dworkin, Ronald. *Sovereign Virtue: The Theory and Practice of Equality*. Cambridge (Mass): Harvard University Press, 2002.
- Ishkhanian, Armine. *Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia*. London: Routledge, 2008.
- Kymlicka, Will. *Contemporary Political Philosophy: An Introduction*. Oxford: Oxford University Press, 2002.
- Mirzakhanyan, Astghik. Economic and Social Development. In: *The Armenians: Past and Present in the Making of National Identity*, edited by Edmund Herzig and Marina Kurkchian, 198-210, London: Routledge, 2005.
- Most important issue facing the country, Caucasus Barometer 2019 Armenia, <https://caucasusbarometer.org/en/cb2019am/IMPIS1/>, accessed 16.07.2020:
- Mouffe, Chantal. *The Democratic Paradox*. Verso: New York/ London, 2000.
- Nozick, Robert. *Anarchy, State and Utopia*. Oxford: Blackwell, 1999.
- Rawls, John. *A Theory of Justice*. Cambridge/Massachusetts: The Belknap Press of Harvard University Press, 2005.
- . *Political Liberalism*. New York: Columbia University Press, 2005.
- Sandel, Michael. *Liberalism and the Limits of Justice*. Cambridge: Cambridge University Press, 1998.
- Walzer, Michael. *Spheres of Justice: A Defense of Pluralism and Equality*. New York: Basic Books, 1983.
- Кант, Иммануил. Основы метафизики нравственности, *Сочинения в 6-ти томах*, т.4, ч. 1. Москва: Мысль, 1965.